

## ՌԱԿԸԲ ԶԱՐԱՔՕԼՈՒ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԾԱՆԱԶՈՒՄԸ ԹՈՒՐԲԻՈՅ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՐՏՔՆ Է

Պոլսահայ Միությունն եւ Նոր Սերունդ Մշակութային Միությունն միացեալ նախաձեռնութիւնը հանդիսացող, իրապէս պատմական եւ միեւնոյն ատեն աննախընթաց ձեռնարկ մըն էր, Եղեռնի 91-ամեակի ոգեկոչման երեկոն որ տեղի ունեցաւ Շաբաթ, Ապրիլ 22, երեկոյան ժամը 7:30ին, Կլէնտէյլի «United Community Church», Կլոր եկեղեցի ճանչցուած սրահէն ներս: Ոգեկոչման ներկայ կը գտնուէին քաղաքական, հասարակական, կուսակցական, լրագրական, գաղութային եւ հիւր դէմքեր, ինչպէս նաեւ շուրջ 800 հայորդիներ որոնք անգամ մը եւս, 91րդ անգամ ըլլալով եկած էին իրենց յարգանքը մատուցանելու 20րդ դարու առաջին ցեղասպանութեան, հայ ժողովուրդի եղեռնի գոհ գացած աւելի քան 1.5 միլիոն նահատակներուն: Արդարեւ, հայ ժողովուրդի բոլոր վերապրող եւ Եղեռնէն ահաւաստիկ 2-3 սերունդ ետք աճող գաւազները, ազգային եւ հայրենասիրական աննահանջ գիտակցութեամբ եւ Հայ Դատի նկատմամբ անվերապահ պահանջատիրութեամբ, ուր որ ալ գտնուին Ապրիլ 24-ի առիթով կը հաւաքուին, աշխարհին ցոյց տալու համար որ հայը հակառակ պետականօրէն ծրագրուած եղեռնագործութեան, կը շարունակէ



Ռակըբ Զարաթօլու

իր շինարար ներկայութիւնը ժողովուրդներու ընտանիքէն ներս, ակնկալելով որ միջազգային համայնքը ի վերջոյ թուրքին ընդունիլ կու տայ իր գործած ոճիրին յանցագործութիւնը եւ հատուցում կ'ընէ հայ ժողովուրդին:

### ԻՆՉՈՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ԱՆՆԱԽՆԵՐԹԱՅ

Եղեռնի 91ամեակի սոցն ոգեկոչումը նկատեցինք պատմական եւ աննախընթաց քանի որ, առաջին

Շաբ.ը էջ 5

## ԵՂԵՐՆԻ 91-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ԱՇԽԱՐԿԻ ՏԱՐԲԵՐ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԵՋ ՆԱԽԱԳԱՅ ԾՈՐԾ ՊՈՒՇ ՈԳԵԿՈՉԵՑ ԱՊՐԻԼ 24-Ը ԱՌԱՆՑ «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ» ԲԱՌԸ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ



Հազարաւորներ եղեռնի գոհերու յուշահամալիր կը բարձրանան

Հայ ժողովուրդը աշխարհի տարբեր երկիրներուն մէջ նշեց Հայոց ցեղասպանութեան 91-ամեակը, յիշեցնելով աշխարհին թէ տարիներու թաւալումը չի կրնար մոռացութեան մատնել պատմական իրողութիւնը: Բազմաթիւ երկիրներու մէջ, պետական անձնաւորութիւններ ու մարմիններ, հանդէս եկան յայտարարութիւններով ու ելոյթներով՝ ոգեկոչելու համար պատմութեան ամենէն սեւ էջերէն մէկը: Ապրիլ 24-ը ոգեկոչողներու շարքին էր Միացեալ Նահանգներու նախագահ ձորճ Պուշ, որ իր յայտարարութեան մէջ դարձեալ չօգտագործեց «ցեղասպանութիւն» բառը: Ան հայութեան նկատմամբ գործադրուածները որակեց որպէս՝ «20-րդ դարու ամենէն ահաւոր ողբերգութիւններէն մէկը»:

«Խմբային սպանութիւնները եւ շուրջ 1.5 միլիոն հայերու բռնի տեղահանութիւնը, Օսմանեան Կայսրութեան վերջին օրերուն՝ 1915 թուականին, պատահածները ամբողջ մարդկութեան համար ողբերգութիւն էր, որ աշխարհ երբեք պէտք չէ մոռնայ», ըսուած էր նախագահ Պուշի յայտարարութեան մէջ:

Շաբթուայ ընթացքին Ամերիկեան Գոնկրէսի անդամ աւելի քան 200 Մերակուտականներ եւ Ներկայացուցիչներ կոչ ըրած էին նախագահ Պուշին, որպէսզի ճանչնայ ցեղասպանութիւնը:

### ԵՐԵՒԱՆ

Ապրիլի 24-ին, ինչպէս միշտ, Հայաստանի բնակչութեան ուշադրութիւնը դարձեալ Միջեռնակաբերդի բարձունքին էր: Եղեռնի գոհերու յուշահամալիր բարձրացան հազարաւոր ժողովուրդ ու լաւերժական կրակի շուրջ դրուող ծաղիկները կազմեցին հսկայ կոյտ մը: Երկրի աշխարհիկ եւ հոգե-

ւոր վերնախաւը, չուշարձանի մօտ եկաւ ժամը 11-ին: Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ի գլխաւորութեամբ, հոգեւորական դասը կատարեց հոգեհանգստեան արարողութիւն:

Կէսօրէ ետք Միջեռնակաբերդ այցելեցին նաեւ հայաստանեան ընդդիմադիր դաշտը ներկայացնող քաղաքական գործիչները, որոնցմէ «Ժառանգութիւն» կուսակցութեան ղեկավար Բաֆֆի Յովհաննիսեան ցեղասպանութեան միջազգային ճանաչումը ուղղակիօրէն կապեց երկրի ժողովրդավարացման գործընթացին:

«Եթէ մենք թակուծ ենք աշխարհի դուռը, պահանջում ճշմարտութեան ճանաչումը Մեծ եղեռնի կապակցութեամբ, Արցախի հիմնահարցի կապակցութեամբ, պիտի կարողանանք նաեւ որպէս նորանկախ հանրապետութիւն այդ նոյն սկզբունքները, նոյն ուղենիշները իրականացնել մեր տան ներսում», - Միջեռնակաբերդի մէջ լրագրողներուն ըսաւ Յովհաննիսեան:

### ՊԵՅՐՈՒԹ

Լիբանանի մայրաքաղաք Պէյրութի մէջ շուրջ չիսուն հազար հայերու մասնակցութեամբ տեղի ունեցած է երթ: Ժողովուրդը նախ համախմբուած է Անթիլիասի Կաթողիկոսարանի շրջափակը, ուր Արամ Ա. Կաթողիկոսի գլխաւորութեամբ տեղի ունեցած է նահատակներու յիշատակի հոգեհանգիստ: Ապա, ժողովրդային թափօրը ճամբայ ելած է դէպի Պուրճ Համուտի մարզադաշտը: Հոն տեղի ունեցած է քաղաքական հաւաք, որուն մասնակցած են Լիբանանի Հանրապետութեան նախագահի, վարչապետի եւ Խորհրդարանի նախագահի ներկայացուցիչները: Ներկայ եղած են

Շաբ.ը էջ 4

## ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐ



Ս.Դ.Կ.-ի, ՆՄՄ-ի, ՀՄՄ-ի եւ «Կայծ» երիտասարդական Միութեան անդամները Մոնթեպելյոյի Յուշարձանի մուտքին

### ԱՅՑ ՄՈՆԹԵՊԵԼԼՈՅԻ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՅՈՒՇԱՐՁԱՆԸ

Ապրիլ 24ին, առաւօտեան ժամը 11ին, Մոնթեպելյոյի Հայ Նահատակներու Յուշարձանը ծաղիկապսակներ զետեղելու գացած էին Հնչակեան Կուսակցութեան Արևմտեան Ամերիկայի վարիչ Մարմնի, Նոր Սերունդ Մշակութային Միություն, Հ.Մ.Մ.ի, «Կայծ» երիտասարդաց

Միություն եւ այլ կառույցներու ներկայացուցիչներ: Յարգանքի տուրք մատուցանելու եկած էր նաեւ թուրք մտաւորական Ռակըբ Զարաթօլու:

Տասնեակ մը ծաղիկապսակներ առաքած էին նաեւ լոս անձեյուսահայ տարբեր կազմակերպութիւններ եւ անհատներ ու ձեռնարկութիւնները:

Շաբ.ը էջ 5

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԹԻԹԵՈՒՆԻԿԻ ԿԵԱՆՔՈՎ ՕԼԻԳԱՐԻՆՆԵՐԸ

1915-Ի ԴԱՍԵՐԸ

Հայաստանի տնտեսական համակարգն այսօր գրեթե ամբողջությամբ հիմնուած է օլիգարխների վրայ: Յամենայն դէպս՝ տնտեսութեան առաւել շահութաբեր ոլորտները եւ դրամական զանգուածի մեծ մասը կենտրոնացած են հենց օլիգարխների ձեռքերում: Բայց ուշագրաւն այն է, որ տնտեսական այսպիսի համակարգն ամենեւին էլ նորութիւն չէ: Այն, ինչ այսօր կատարուած է Հայաստանի տնտեսական դաշտում, ոչ միայն կրկնուել է 16-18-րդ դարերի սուլթանական թուրքիայում, այլեւ ամրագրուած է եղել համապատասխան օրէնքներով:

Ի դէպ, Հայաստանի այսօրուայ իշխանութիւնները թող առանձնապէս վատ չզգան, եթէ իրենց համեմատում են թուրք սուլթանների հետ: «Գենետիկ նմանութեան» մասին այս դէպքում խօսք անգամ լինել չի կարող: Ի վերջոյ, պատմական փաստ է, որ թուրք սուլթաններն ամենեւին էլ զենետիկ թուրքեր չեն եղել: Որպէս կանոն, սուլթանների հարեմները կազմուած են եղել քրիստոնեայ կանանցից, այնպէս որ՝ սուլթանը եղել է կիսով չափ թուրք, նրա որդին՝ արդէն մէկ-քառորդով թուրք,

ինչիւ՞ համար ենք յիշեցնում այս ամէնը: Պարզապէս այսօրուայ Հայաստանի վիճակը չափազանց նման է 16-18-րդ դարերի սուլթանական թուրքիայի վիճակին: Այն իմաստով, որ այսօրուայ Հայաստանում նոյնպէս որեւէ օլիգարխ չի կարող վատահ լինել, թէ իր ունեցուածքը կտակելու է որդուն: Յամենայն դէպս՝ առ այսօր Հայաստանում չի արձանագրուել գոնէ մի դէպք, երբ իշխանութիւններին ծառայած եւ այդ ծառայութիւնների շնորհիւ միլիոնատէր դարձած մէկը կարողանայ ունեցուածքը կտակել ժառանգներին, եւ նրանք հանգիստ վայելեն դա: Ըստ էութեան, այսօր օլիգարխներին պատկանող տասնեակ եւ հարիւրաւոր միլիոնները նրանց սեփականութիւնը չեն, պարզապէս Քոչարեանը նրանց թողլատրել է ժամանակաւորապէս տնօրինել այդ միլիոնները: Իսկ հիմա պատկերացրէ՛ք՝ յանկարծ այդ օլիգարխներից որեւէ մէկին դժբախտ դէպք է պատահում: Ասենք՝ կոկորդիլոսի ճկոյթի ապուրի չափազանց մեծ բաժին է ընդունում, կամ կազինոներում նախատեսուածից աւելի շատ ծեծ է ուտում: Ինչ էք կարծում, նրանց

թուրքիային եւ աշխարհին ուղղուած՝ Յեղասպանութիւնը ճանաչելու մեր կոչերն արդարացի են: Եթէ մեր հարեւաններն իսկապէս ուզում են ժամանակակից եւրոպական պետութիւն կառուցել, նրանք պարտաւոր են դատապարտել իրենց պապերի կատարած յանցագործութիւնը: Հակառակ դէպքում՝ թուրքիան կը մնայ վայրագ ասիական պետութիւն:

Իսկ մենք, բացի Յեղասպանութիւնը ճանաչելուն ուղղուած ջանքերից, մեզ համար պէտք է պարզենք՝ արդեօք 20-րդ դարի սկզբի հայկական վերնախաւն ամէն ինչ արե՞լ է՝ հայ ժողովրդին փորձութիւնների չենթարկելու համար: Հայ պատմաբանները վկայում են, որ՝ ոչ. քաղաքական մտքի թէ յեղափոխական եւ թէ պահպանողական թեւերն իրենց բարձրութեան վրայ չէին: Մեր ազգային առաջնորդների սխալները 20-րդ դարի սկզբին եթէ ներելի չեն, ապա՝ հասկանալի են: Մի բան է, երբ դու համայնք ես դեկավարում, մէկ այլ բան է՝ պետութիւն: Պատասխանատուութեան եւ մտածողութեան աստիճանները տարբեր են՝ ոչ միայն առաջնորդների մօտ, այլեւ՝ շարքային քաղաքացիների:

ասենք, եւս-ի պահանջն է, այլեւ, առաջին հերթին, ազգային պրագմատիզմի: Իսկ մեր իշխանաւորները պրագմատիկ են միայն իրենց աթոռի եւ զրպանի առումով, եւ հենց դա է նրանց ստիպում տրուել Ռուսաստանին եւ երկրի ներսում ճնշել ազատութիւնը:

Բայց ընդհանուր առմամբ, եթէ նայենք վերջին տասնամեակների մեր պատմութեան կտրուածքով, ազգային պրագմատիզմը, բարեբախտաբար, գերակշռում է «համայնքային» առաւելապաշտութեանը եւ ուժանտիզմին: Դրա վառ ապացոյցն այն է, որ 20-րդ դարում պետութիւն ստեղծելու հայերի 3 փորձերը գնալով աւելի պրագմատիկ էին դառնում: Եւ դասերը, որոնք կարող ենք քաղել մեր նորագոյն (եւ ոչ միայն նորագոյն) պատմութիւնից, գնալով աւելի ակնյայտ են դառնում:

Շատ հակիրճ, կենցաղային լեզուով այդ դասերը կարելի է ձեւակերպել այսպէս. այնտեղ, որտեղ կարող ենք կռուել, որտեղ շաներ ունենք յաղթելու՝ կռուենք: Որտեղ պարզ է, որ առայժմ շաներ չունենք՝ բանակցենք, դիւանագիտութիւն կիրառենք եւ այլն: Այլ կերպ ասած՝ մեր առաջ իրականանալի խնդիրներ դնենք: Երբ խնդիրները դառնում են մաքսիմալիստական, «ծովից ծով»՝ վտանգ է առաջանում կորցնել այն, ինչ ունենք: Ոչ մէկին չվստահենք՝ տրուելու աստիճանի: Պատրանք չունենանք, որ, մասնաւորապէս, Ռուսաստանը մեր փոխարէն կը լուծի մեր խնդիրները: Յանկացած երկիր մեր դաշնակիցն է այն չափով, որքանով լուծում է իր խնդիրները: Այդ տարրական բաները հասկանալով՝ կարելի է առաջ գնալ: Չհասկանալով՝ ետ ենք գնալու:

**Յամենայն դէպս՝ առ այսօր Հայաստանում չի արձանագրուել գոնէ մի դէպք, երբ իշխանութիւնների շնորհիւ միլիոնատէր դարձած մէկը կարողանայ ունեցուածքը կտակել ժառանգներին, եւ նրանք հանգիստ վայելեն դա:**

եւ այդպէս շարունակ: Ինչեւէ: Իսկ ի՞նչ օրէնքներ էին գործում սուլթանական թուրքիայում: Ինչպէս յայտնի է, կաշառքն այնտեղ հսկայական չափերի էր հասնում (իհարկէ՛՝ ո՛չ այսօրուայ Հայաստանի մասշտաբներով): Այնպէս որ, ցանկացած պաշտօնեայ կարճ ժամանակում հսկայական հարստութիւն էր դիզում: Փոխարէնը՝ գործում էր մի օրէնք, որի համաձայն, մեծահարուստի մահուան դէպքում նրա ունեցուածքը որպէս ժառանգութիւն անցնում էր ոչ թէ որդուն, այլ սուլթանին: Աւելորդ է ասելը, որ ամէն անգամ, երբ սուլթանին շտապ փող էր պէտք լինում, մեծահարուստներից մէկը «անսպասելի օրէն» մահանում կամ մահուան էր դատապարտուելու: Ընդ որում, մահուան դատապարտուելու «գործընթացը» նոյնպէս կանոնակարգուած էր: Նման դէպքերում սուլթանը դատապարտուածին նուէր էր ուղարկում՝ կարմիր խալաթ ու թուր: Դատապարտուածը պարտաւոր էր հագնել խալաթը եւ ինքնասպանութիւն գործել, եթէ դա չէր անում՝ ընծան բերողները տեղում սպանում էին նրան:

զաւակներին թող կը տա՞ն վայելել այդ միլիոնները: Իհարկէ թող չեն տայ: Դրանք պատկանում են Քոչարեանին՝ ճիշդ այնպէս, ինչպէս թուրքիայում ամէն ինչ պատկանում էր սուլթանին: Այս օլիգարխներն իրենք գրոյից են սկսել, եւ հետեւաբար՝ գիտեն իշխանութիւններին քծնելու արժէքը, բայց նրանց զաւակներն արդէն գրոյից չեն սկսելու: Հենց դրա համար էլ նրանց զաւակներից խլուելու է ունեցուածքը: Խլուելու եւ բաժանուելու է նորանոր «գրոյից սկսողներին», որպէսզի հիմա էլ սրանք սկսեն ծառայել իշխանութիւններին:

Հասկանո՞ւմ են արդեօք հայ օլիգարխներն այս պարզ իրողութիւնը: Հասկանո՞ւմ են արդեօք, որ իրականում մարդը կարող է հարուստ լինել (այսինքն՝ սեփականութիւն ունենալ) միայն այն երկրներում, որտեղ յարգուում են օրէնքներն ու իրաւունքները (այդ թւում նաեւ սեփականութեան իրաւունքը): Հասկանո՞ւմ են արդեօք, որ արեւելեան բռնապետական համակարգն առաջին հերթին հենց իրենց թշնամին է, որովհետեւ սուլթանա-

կան թուրքիայի միլիարդատէր վեզիրների ծոռներն այսօր կամ չկան, կամ մուրացկանութիւն են անում Իսթանպուլի փողոցներում, մինչդեռ Ամերիկայում հարիւր տարի առաջ լուցկու գործարան հիմնողի թոռները մինչեւ հիմա միլիոնատէրեր են: Թէ իրենք էլ են առաջնորդում «ինձնից յետոյ» թէկուզ ջրհեղեղ՝ կարգախօսով:

Յանկացած մարդու սեփականութիւն պահպանում է ոչ թէ սափրագլուխներով, այլ օրէնքներով: Հետեւաբար՝ Հայաստանն իրականան պետութիւն դարձնելու հարցում ամենաշատը հենց օլիգարխները պիտի շահագրգռուած լինէին: Բայց՝ երեւի վախն աւելի զօրաւոր է:

Մէկ էլ տեսար՝ Քոչարեանը կարմիր խալաթ ուղարկեց:  
**ՀՐԱՅՐ ԱԻԵՏԻՍԵԱՆ**  
«ՉՈՐՐՈՐԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»  
4-22-06

**ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ**  
«ԱՌԱԻՕՏ»  
4-22-06

**ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹ-ԱԹԵՐԹ**  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի  
ԽՄԲԱԳԻՐ՝  
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ՂԱԶԱՆԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ  
ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ  
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՊԱՒԻԹԵԱՆ  
Ֆեռ. (626) 797-7680  
Ֆաքս. (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social  
Democratic Hunchakian Party of  
Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second  
Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail),  
\$125.00 (Air Mail).  
All payments must be made in  
US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104

ՈՂԲԻ ՀԱՅՐԵՆԻՔ

Արդէն շուրջ քառասուն տարի է՝ Երեւանի բարձունքներից մէկի վրայ խոյանում է հայոց Մեծ եղբունի գոհերի յիշատակը խորհրդանշող ու լաւերժացնող յուշարձանը:

Ապրիլի 24-ին ողջ հայ ժողովուրդը բարձրանում է Ծիծեռնակաբերդ՝ յարգանքի տուրք տալով անմեղ նահատակների յիշատակին: Գնում են դարձակներն ու ուսանողները, արջիկներն ու տղաները, կանայք ու տղամարդիկ, ջահելներն ու տարեցները, մի խօսքով՝ բոլորը:

Խորհրդային տարիներին նոյնպէս Ապրիլի 24-ին ժողովուրդը

Ծիծեռնակաբերդ էր բարձրանում, բայց խորհրդային տարիներին ուսանողներին ու դարոցականներին յաճախ էին պատժում Ապրիլի 24-ին դասերից փախչելու ու Ծիծեռնակաբերդ գնալու համար:

Մեր Ազգային ժողովը Ապրիլի 24-ը մտցրել է տօների շարքը, եւ հիմա այդ օրը համարում է ոչ աշխատանքային: Հիմա արդէն հայ ժողովուրդն ու յատկապէս Հայաստանի իշխանութիւնները ջեղասպանութիւնից խօսում են ոչ միայն ապրիլի 24-ին, այլեւ ամէն օր, եւ ցեղասպանութեան թեման դարձրել են մեր պետութեան արտաքին քա-

ղաքականութեան հիմքերի հիմքը: Յիշեցնենք, որ մի քանի օրից նաեւ Շուշուա յաղթանակի տարելիցն է, եւ այդ առթիւ կը ցանկանայինք մաղթել, որ հայ ժողովուրդն այդ օրը նոյնպէս ազգովի նշէր, մասնաւորապէս որ այդ օրն իսկապէս տօն է: Այդ օրը մենք ատրպէյճանցիներին չենք կոտորել. պարզապէս արժանապատուօրէն կռուել ու յաղթել ենք, եւ արժէ հպարտանալ դրանով, եւ արժէ սերունդներին ներկայանալ իբրեւ յաղթող՝ արժանապատուօրէն, առանց լացուկոծի:

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**  
«ՏԱՐԵԳԻՐ»  
4-22-06

ԼՈՒՐԵՐ

ՍՏԵՓԱՆ ԴԵՄԻՐՇԵԱՆ.

«ԱՅՍ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՉԿԵՂԾԵԼ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
Ստեփան ԴեմիրՇեանը հանգիստ է վերաբերում վերջին շրջանում ուժ գնացած կանխատեսումներին, թէ «Արդարութիւն» դաշինքը յաջորդ ընտրութիւններում դժուար թէ նախկին հեղինակութիւնը վայելի ժողովրդի մօտ ու ստանայ 2003-ի չափ ձայներ, իսկ ՀԺԿ-ն ընդհանրապէս կարող է չյայտնուել 2007-ի խորհրդարանում:

«Յանկութիւն է, որը պէտք չէ շփոթել իրականութեան հետ: Նման «խորը» կանխատեսումներ արւում էին նաեւ նախագահական ընտրութիւններից առաջ: Ըստ այդմ, Ռոբերդ Քոչարեանը պէտք է ստանար 56 տոկոս, եւ՝ 0,9 տոկոս քուէներ: Դա չխանգարեց ինձ յաղթել նախագահական ընտրութիւններում», - Ապրիլ 22-ին «Ազդակ» ակումբում յայտարարեց ՀԺԿ առաջնորդը:

Ստեփան ԴեմիրՇեանի հաւաստմամբ, իրենք արդէն այսօր են պատրաստ ընտրութիւնների՝ թէ՛ հերթական, եւ թէ՛ անգամ արտահերթին, սակայն կուսակցութեան համար դեռեւս ճշգրտուած է մասնակցութեան ֆորմատը՝ արդեօք նրանք դաշինք կը կազմեն ընդդիմադիրների հետ, թէ միայնակ կը մտնեն պայքարի մէջ. - «Պոտենցիալ դաշնակիցները շատ են՝ ամբողջ ընդդիմադիր դաշտը, եւ

եթէ հանրահաւաքներ չկան, դա չի նշանակում, որ որեւէ աշխատանք այդ ուղղութեամբ չի տարւում»:

ՀԺԿ-ն որեւէ ընտրութեան միայնակ դեռեւս չի մասնակցել, կուսակցութիւնը բոլոր ընտրութիւններին դաշինքներով է գնացել: Ստեփան ԴեմիրՇեանի կարծիքով, «դա ոչինչ չի նշանակում». - «Քանի որ միշտ էլ մենք ենք եղել միւսների յաղթաքարը, եւ ոչ թէ հակառակը: Հենց ՀԺԿ-ի շնորհիւ է, որ այդ դաշինքները յաղթել են բոլոր համապետական ընտրութիւններում»:

Այսօր խօսել յաջորդ ընտրութիւնների անցկացման արդարութեան մասին, քաղաքական գործչի կարծիքով, «ուղղակի ծիծաղելի է»:

«Այս իշխանութիւնը չի կարող չկեղծել: Որեւէ պատրանք ունենալ պէտք չէ՝ փորձելու են կեղծել նաեւ յաջորդ ընտրութիւնները, բայց մենք էլ պայքարելու ենք այդ կեղծիքների դէմ», - նշեց ՀԺԿ առաջնորդը:

Խօսելով 2008-ի նախագահական ընտրութիւնների մասին՝ Ստեփան ԴեմիրՇեանը ասաց. - «Կարծում եմ, հիմա դեռ շուտ է այդ մասին խօսելը, բայց ինձ համար նախագահական ընտրութիւններին մասնակցելը ինքնանպատակ չէ»:

ՅԱՐՁԱԿՈՒՄ ԱՐԱՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ԿՐԱՅ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Ապրիլ 21-ին Ոստիկանութեան էրեբունու բաժնի մօտակայքում գինուած անյայտ անձինք, 12 հոգի դիմակներով կանգ նեցրել են «Նոր ժամանակներ» կուսակցութեան նախագահ Արամ Կարապետեանի եւ նրան ուղեկցող մեքենաները, վարորդներին ու թիկնապահներին պառկեցրել են գետնին, ստուգել, ապա, ըստ նախնական տեղեկութիւնների, տարել են Ազգային Անվտանգութեան ծառայութիւն (ԱԱԾ): Նպատակն իբր գէնքի առկայութիւն ստուգումն է եղել:

Ըստ «Նոր ժամանակներ» կուսակցութեան լրատուական ծառայութեան՝ «Արամ Կարապետեանին թողնելով փողոցում՝ գինուած անձինք նրա թիկնապահի տղաներին եւ վարորդներին կուսակցութեան ծառայողական մեքենաներով տարել են անյայտ ուղղութեամբ: Յարձակման ողջ ակցիան դիմակաւոր, գինուած անձինք նկարել են նաեւ մի քանի տեսախցիկներով»:

ԱԱԾ տարածել էր հաղորդագրութիւն, որ իրենք բերման են ենթարկել «նորթութիւն լեզափոխական Արամ Կարապետեանի թիկնապահներին»՝ նրանց մօտ գէնքի առկայութեան կասկածանքով:

ԴՐԱՄԱՇՆՈՐՅԸ ԿՈՌՈՒՊՑԻԱ Է ԾՆՈՒՄ

«Միայն փողը չէ, որ կոռուպցիա է ծնում, նրա առաջացման հիմքը գաղափարի խեղաթիւրումն է սկսում»։ այս կարծիքին էին «Քաղաքացիական Ազգային Նախաձեռնութիւն» ՀԿ-ի կազմակերպած հանրային լսումների մասնակիցները:

Վերը ներկայացուած միտքը գարգացնելով՝ «Յոյս» հասարակական կազմակերպութեան նախագահ Կարէն Յակոբեանը՝ ներկաների դատին յանձնեց ՀԿ-ի պատմութիւն կամ թէ ինչպէս է կոռուպցիան ձեւաւորուում եւ յստակօրէն ինստիտուցիոնալիզացուում ամերիկացի եւ եւրոպացի հարկատուների գումարներով, միջազգային դոնոր կազմակերպութիւնների դրամաշնորհների միջոցով:

Կարէն Յակոբեանը, որը նաեւ անդամակցում է «կոռումպացուած ՀԿ-ին»՝ «Պրոֆեսիանալները յանուն քաղաքացիական հասարակութեան» ՀԿ-ին, անթոյլատրելի է համարում նման գործունէութիւնը: ՊՀԲՀ-ի գործունէութիւնը, որի հիմնական առաքելութիւնը Հայաստանում քաղաքացիական հասարակութեան կայացումն է:

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ԱՌԱՋ ԼՂՅ-Գ ԲԱՐՏԵՐԸ ՉԻ ԲԱՑՈՒՄ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Ռամբոյեում նախատեսուած Քոչարեան-Ալիեւ հանդիպումից առաջ, ԼՂՀ նախագահ Արկարդի Դուկասեանը պատասխանելով «Ա1+»-ի հարցին, ասաց, որ առանձնապէս մեծ սպասելիքներ չունի այդ հանդիպումներից: Քոչարեան-Ալիեւ հանդիպումներ անարդիւնաւէտութիւնը մտահոգում է նաեւ ԵԱՀԿ համանախագահներին, որի մասին Երեւանում վերջերս նշեց ԵԱՀԿ Մինսկի խմբի ֆրանսիական համանախագահ Բեռնար Ֆասիէն:

- Համանախագահները ցանկացած առիթով նշում են, որ խնդիրը հնարաւոր չէ կարգաւորել առանց փոխզիջումների: Որպէս ԼՂՀ նախագահ կարող էք ասել՝ փոխզիջում ասելով այսօր ի՞նչ է հասկանում Ղարաբաղի բնակչութիւնը եւ որքանով է պատրաստ դրան:

- Ես չեմ գտնում, որ բանակցութիւններից առաջ ճիշդ է մեր

քարտերը բացելը: Մեր քարտերը կը բացուեն միայն բանակացութիւնների սեղանի շուրջ: Ղարաբաղի գիշումները կարուած են Ատրպէյճանի գիշումներից: Փոխզիջում՝ նշանակում է գիշումներ երկու կողմից: Միակողմանի գիշումներ չեն կարող լինել:

- ԼՂՀ-ն բանակցութիւնների գործընթացն ամբողջութեամբ վստահում է ՀՀ-ին:

- Կողքից միշտ թւում է, որ աւելի շատ կարող էիր անել, սակայն դա սուբեկտիւ մօտեցում է: Մենք անվստահութեան որեւէ հիմք չունենք:

Մենք գտնում ենք, որ ՀՀ իշխանութիւնները բանակցային գործընթացում փորձում է անել այն, ինչ հնարաւոր է, սակայն մենք գտնում ենք, որ ԼՂՀ-ի մասնակցութիւնը աւելի արդիւնաւէտ կը դարձնի գործընթացը եւ շատ հարցեր միջազգային հանրութիւնը աւելի հեշտ կ'ընդունի:

ՋՆԴԻԿ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԴՈՒՐՄ ԵՆ ԵԿԵԼ ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑԻ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Ապրիլ 20-ին Երեւանի պետական բժշկական համալսարանի Զէյթունի հանրակացարանի 6-րդ յարկից երրորդ կուրսի հնդիկ ուսանող Սանդի Անչալիան ընկել է ցած: Հիւանդանոց տեղափոխուելուց հինգ րոպէ անց նա մահացել է:



Մինչեւ հիւանդանոց տեղափոխուելը, ինչպէս հաւաստիացնում են հնդիկ ուսանողները, իրենք եւս՝ իբրեւ ապագայ բժիշկ ցանկացել են եւ կարող էին գոնէ առաջնային օգնութիւն ցոյց տալ, սակայն դէպքի վայր ժամանած ոստիկանները եւ բժշկական ընդհանուր բաժնի դեկան Աննա Սարգսեանը թոյլ չեն տուել՝ պատճառաբանելով, որ շուտով կը գայ շտապ օգնութեան մեքենան:

Մեքենան ժամանել է 50 րոպէ անց՝ առանց բժշկական անձնակազմի, համապատասխան դեղորայքի ու անհրաժեշտ թթուածնի: Օգնութեան ակնկալիքով հնդիկ ուսանողները դիմել են ԵՊԲՀ-ի նորընտիր ռեկտոր Գոհար Քեալեանին, սակայն նա ոչ միայն չի օգնել, այլեւ անարգել է նրանց: Հայաստանում սովորող 800 հնդիկ ուսանողների մեծամասնութիւնը, իրենց ազգակցի մահուան մէջ մեղադրում են ԵՊԲՀ-ի

Երեւանի մէջ հնդիկ ուսանողները կը բողոքեն իրենց դասընկերոջ մահուան առթիւ

ռեկտորին: Նրա պահուած քից բորբոքուած, «Ամօթ ռեկտորին», «Պահանջում ենք արդարութիւն» ցուցապատաւներով հնդիկ ուսանողները բողոքի երթի էին դուրս եկել Հանրապետութեան հրապարակից մինչեւ Ազգային ժողով: Նրանք պահանջում էին Գոհար Քեալեանի հրաժարականը:

Ի դէպ, Սանդի Անչալիայի մահուան մասին տարբեր վարկածներ կան: Ուսանողներից շատերը պնդում են, որ նա հոգեպէս հաւասարակչիւ երիտասարդ էր եւ դժուար թէ ինքնասպանութիւն գործեր:

«ՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԱՃՈՒՄ ԵՆ ԿԵՆՑԱԴԻ ՊԱՏՃԱՌՈՎ»

ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱԳԻՐ»: Հայաստանի Գլխաւոր դատախազը, Ապրիլի 24-ին պատասխանելով լրագրողների հարցերին, հաստատել է, որ 2006 թուականի առաջին եռամսեակում աճել են սպանութիւններն ու սպանութեան փորձերը: Բայց դատախազը նաեւ յայտարարել է, որ ճիշդ չեն գնահատականները, թէ կատարուող սպանութիւններն ու մահափորձերը քաղաքական են:

«Իրօք, այս տարի եռամսեակի արդիւնքով մենք աճ ունենք՝ սպանութեան եւ սպանութեան փորձերի, բայց չէի ասի, թէ դա քաղաքական երանգ ունի: Բոլոր սպանութիւնների վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ դրանք կատարուում են կենցաղային դրոյապատճառներով, կենցաղային հողի վրայ, եւ ուսումնասիրութիւնը նաեւ ցոյց է տալիս, որ դրանք կենտրոնացուած չեն, որեւէ մարգում, համայնքում: Պէտք է ասեմ, որ բոլոր մարգերում, համայնքներում այդ աճը նկատուում է, բայց չմոռանանք, որ անցեալ տարի՝ 2005 թուականին, մենք ունեցանք էական նուազում սպանութիւնների եւ սպանութեան փորձի դէպքերի էական նուազում», ասում է Ադուան Յովսէփեանը:

ԼՈՒՐԵՐ

ԵՂԵՈՆԻ 91-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ԱՃԽԱՐԿԻ ՏԱՐԲԵՐ ՍԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Մարտնակուած էջ 1-էն

Հայ եւ Արաբ նախարարներ, խորհրդարանի անդամներ եւ կուսակցական ներկայացուցիչներ:

Հայերէն ու արաբերէն լեզուով ելոյթներու ընթացքին դատապարտուած է թրքական կառավարութեան Յեղասպանութիւնը ու պահանջուած է Եւրոպական խորհրդարանէն որպէսզի գործադրութեան դնելով իր իսկ ընդունած բանաձեւերը, պարտադրէ թուրքիոյ՝ ընդունելու համար Հայոց Յեղասպանութիւնը:



Նիւ Եորքի «Թայմ» հրատարակչի վրայ պարզուած են Հայկական Յեղասպանութիւնը դատապարտող պաստառներ:

ՆԻ ԵՈՐՔ

Ապրիլ 23-ին Նիւ Եորքի «Թայմ Սթուէր»-ի վրայ բարձրացուած էին Յեղասպանութեան ճանաչումը պահանջող պաստառներ: Հոն նախատեսուած էր նաեւ հանդիսութիւն, սակայն անդրական հաւաքը այս տարի անձրեւի պատճառով տեղափոխուած է Սուրբ Վարդան եկեղեցու դահլիճը, ուր հաւաքուած է էր շուրջ 3 հազար հոգի:

Բազմաթիւ լրատուամիջոցներ ներկայ եղած են ու անդրադարձած հաւաքին: Ելոյթով հանդէս եկած են բազմաթիւ Գոնկոյեաններ եւ Երուսաղէմի Հորդոստի ինստիտուտի ղեկավարը:

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԵՍ

Հայոց Յեղասպանութեան 91-ամեակի առիթով Արժանթինի Ազգային Սենատը հանդէս եկած է յայտարարութեամբ մը, խստորեն



Հագարաւոր հայեր կը քալեն Պէյրութի փողոցներուն վրայ

քննադատելով հայ ժողովուրդի նկատմամբ գործուած ոճիրը եւ իր գորակցութիւնը յայտնած է այդ ողբերգութեան զոհերուն եւ անոնց հարազատներուն, որոնք «կրած են եւ կը կրեն

այս ցաւալի դէպքերու հետեւանքները»:

Ապրիլ 22-ին Պուէնոս Այրէսի Արքեպիսկոպոս եւ Արժանթինի Հոռմէական կաթոլիկ եկեղեցու հոգեւոր առաջնորդ Քարտինալ խէ Պերգոլիոյի կողմէ մայրաքա-

ղաքի Մայր Տաճարէն ներս տեղի ունեցած է միջ եկեղեցական աղօթքի եւ Հայոց Յեղասպանութեան նահատակներու ոգեկոչման արարողութիւն, որուն ներկայ եղած են հարիւրաւոր արժանթինցիներ:

Քարտինալը իր խօսքին մէջ կոչ ըրած է թուրքիոյ անվերապահօրէն ճանչնալ Հայոց Յեղասպանութիւնը որպէս հայ ազգի եւ մարդկութեան հանդէպ Օսմանեան կայսրութեան կողմէ իրականացուած ծանրագոյն ոճրագործութիւն:

Նոյն օրը երեկոյեան Պուէնոս Այրէսի ամենամեայ Գրքի միջազգային ցուցահանդէսի սրահէն ներս Հայոց Յեղասպանութեան նուիրուած դասախօսութեամբ հանդէս եկած է Մեծ Բրիտանիոյ Լորտերու Պալատի նախկին փոխխօսնակ՝ Պարոնուհի Քերուալն Քոքս:

Տեղի ունեցած է նաեւ երիտասարդական ցոյց թրքական դեսպանատան առջեւ:

ՄՈՆԹԵՎԻՏԵՕ

Ուրուկուայի մայրաքաղաք մոնթեվիտէոյի մէջ, Ապրիլ 24-ին համայնքի ղեկավարները ծաղկեպսակ գետեղած են «Հայ ժողովուրդի Յեղասպանութիւն» անունը կրող հրապարակի ցուցատախտակին առջեւ:

Ապա, «Արմենիա» հրապարակին վրայ տեղի ունեցած է ոգեկոչման գլխաւոր հանդիսութիւնը: Ներկայ եղած է Ուրուկուայի տարածքային կառավարման նախարար Մարիա-

նօ, խորհրդարանի նախագահ Ուալթըր Գարտոգօ, խորհրդարանի հայազգի պատգամաւոր Լիլիան Քէշիշեան եւ թեմի առաջնորդ Յակոբ Արք. Քիլլէնճեան:

Հանդիսութեան գլխաւոր բանախօսը եղած է պատմական գիտութիւններու մասնագէտ Ալպերթօ Տուրէճեան, որ անդրադարձած է Յեղասպանութեան պատճառներուն եւ հետեւանքներուն:

ՊՐԻԻՔՍԷԼ

91-ամեակին նուիրուած միջոցառումներ սկսած են Ապրիլ 23-ին Եղեռնի զոհերու յիշատակին տեղադրուած Խաչքարի շուրջ մոմավառութեան արարողութեամբ: Ապրիլ 24-ին Պրիւքսէլի հայկական եկեղեցու մէջ մատուցուած պատարագէն յետոյ տեղի ունեցած է սոյն հաւաք Պելճիքայի մօտ ՀՀ դեսպան Վ. Չիտեչեանի, ՆԱՏՕ-ի մօտ ՀՀ առաքելութեան ղեկավար Ս. Մկրտչեանի եւ Պելճիքայի խորհրդարանականներու, Պրիւքսէլի տեղական իշխանութիւններու, հայ, հրեայ եւ թուրքներու համայնքներու ներկայացուցիչներու մասնակցութեամբ: Հաւաքին յաջորդած է երթ՝ դէպի Յեղասպանութեան զոհերու յիշատակին տեղադրուած յուշարձան եւ ցոյց՝ Պրիւքսէլի թրքական դեսպանատուն:

ՓԱՐԻՉ

91-րդ ամեակին նուիրուած միջոցառումները Փարիզի մէջ սկսուած են Ապրիլ 23-ին: Հայոց Յեղասպանութեան յիշատակին պատարագ մատուցուած է Փարիզի Աստուածամօր տաճարէն ներս:

Նոյն օրը երեկոյեան մասնակիցօրէն փակուած է Շանգ-էլիզէ պողոտայի Շառլ Ծը Կոլ հրապարակին նայող հատուածը, եւ հարիւրաւոր Ֆրանսահայեր, դրօշներով ու ծաղիկներով լուռ քալած են դէպի Յաղթանակի կամարը, ուր Ֆրանսայի մօտ ՀՀ դեսպան էտուարտ Նալպանտեան եւ Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրակի յատուկ ներկայացուցիչ էլիզէի պալատի զինուորական հրամանատարը բարձրատիման զինուորականներու ընկերակցութեամբ, ի նշան յարգանքի հանդիսաւորութեամբ բորբոքած են Անմար կրակը եւ ծաղկեպսակ գետե-

ղած Անյայտ զինուորի շիրմին: Հնչած են Ֆրանսայի եւ Հայաստանի պետական հիմները, խոնարհուած են երկու երկիրներու պետական դրօշները:

Ապրիլի 24-ի առաւօտեան Ֆրանսայի տարբեր քաղաքներու մօտ չորս տասնեակ հայկական եկեղեցիներու զանգերը ազդարարած են Հայոց Մեծ Եղեռնի սոյն պատարագներու սկիզբը:

Ֆրանսական մամուլը եւ հեռուստատեսութիւնը լրատուական ծրագիրներով եւ յատուկ յայտագիրներով լայնօրէն արձագանքած են Եղեռնի ոգեկոչումներուն:

ՄՈՍԿՈՒ

Մոսկուայի մէջ թուրքիոյ դեսպանատան մօտ Ապրիլ 24-ին տեղի ունեցած է ցոյց 150 հոգիներու մասնակցութեամբ: Անոնք պարզած են ցուցատախտակներ, որոնց վրայ գրուած են՝ «Յոյս չունենաք. Չենք մոռանալ. Չենք ների», «Նենգութիւն եւ բռնութիւն՝ ահա թրքական քաղաքականութեան էությունը», «Եւրոպայի թուրքիոյ տեղը չէ» մակագրութիւններով:

Կարգ մը ցուցարարներ փորձած են ձուեր նետել դեսպանութեան շէնքի վրայ, սակայն ոստիկանները թոյլ չեն տուած:

ՕԹԱՈՒ

Գանատայի մայրաքաղաք Օթուայի մէջ, խորհրդարանի նիստի ընթացքին Արտաքին գործոց նախարար Փիթըր Մաքքէյ վերահաստատած է կառավարութեան քաղաքականութիւնը Հայկական Յեղասպանութեան նկատմամբ:

Անցեալ Ուրբաթ օր, Գանատայի վարչապետ հրապարակած էր պաշտօնական դիրքորոշումի յայտարարութիւն մը, ճանչնալով Հայկական Յեղասպանութիւնը: Խորհրդարանի նիստի ընթացքին արտաքին գործոց նախարարը վերահաստատեց այդ դիրքորոշումը եւ կոչ ըրաւ իր պաշտօնակիցներուն՝ վայրկեան մը լուռութեամբ յարգել զոհերու յիշատակը:

ՅԵՂԱՊԱՆՈՒԹԵԱՆ ԳԱՆԱՉԵԼ ԵՆ 19 ԵՐԿԻՐՆԵՐ

1915 թուականի հայերի ցեղասպանութիւնից 91 տարի անց ոճրագործութիւնը ճանաչել եւ դատապարտել է 19 երկիր եւ Եւրամիութիւնը: Ուրուգուայը հայերի ցեղասպանութիւնը ճանաչել է 1965 թուականին խորհրդարանի որոշումով, իսկ 2004-ին՝ օրէնքով: Կիպրոսը ճանաչել է 1982 թուականին՝ խորհրդարանի բանաձեւով, Եւրամիութիւնը 1987-ին, 1998-ին, 2000-ին, 2001-ին, 2002-ին եւ 2005-ին ճանաչել է եւ ընդունել հայերի ցեղասպանութիւնը դատապարտող բանաձեւեր:

Արգենտինայի խորհրդարանը բանաձեւեր է ընդունել 1993-ին եւ 2005 -ին, իսկ 2004-ին ցեղասպանութիւնը ճանաչել է օրէնքով: ՌԴ Պետդուման բանաձեւ է ընդունել 1995 թուականին: Կանադայի խորհրդարանը հայերի ցեղասպանութիւնը դատապարտող բանաձեւեր է ընդունել 1996, 2002, 2004 թուականներին: Յունաստանի խորհրդարանը համա նման բանաձեւ է ընդունել 1996 թուականին: Լիբանանը եւս հայերի ցեղասպանութիւնը ճանաչել է բանաձեւերով՝ 1997 եւ 2000 թուականներին: Բելաիսի խորհրդարանը բանաձեւ է ընդունել 1998-ին: Ֆրանսիայի խորհրդարանը որոշումներ է ընդունել 1998 եւ 2000 թուականներին, իսկ 2001-ին ցեղասպանու-

թիւնը ճանաչել եւ դատապարտել է օրէնքով: Շուեդիան ընդունել է 2000 թուականին խորհրդարանի զեկոյցով: Նոյն տարում հայերի ցեղասպանութիւնը ընդունել են նաեւ Վատիկանը եւ Իտալիան: Շուեյցարիան յատուկ բանաձեւ է ընդունել 2003 թուականին, Սլովակիան եւ Հոլանդիան՝ 2004-ին:

Գերմանիան, Լիտվան, Լեհաստանը հայերի ցեղասպանութիւնը դատապարտող որոշումներ են ընդունել 2005 թուականին:

Մեծ ութնեակի երկրներից՝ ԱՄՆ, Իտալիա, Ֆրանսիա, Կանադա, Գերմանիա, Ճապոնիա, Մեծ Բրիտանիա, Ռուսաստան, հայերի ցեղասպանութիւնը ճանաչել են հինգը:

Ամերիկայի Միացեալ Նահազները չի ճանաչել հայերի ցեղասպանութիւնը: Սակայն ԱՄՆ 51 սուբէկտների մեծ մասը՝ 29-ը ճանաչել է: Դրանք են՝ Ալյասկա, Արիզոնա, Արկանզաս, Կալիֆորնիա, Գոլորատո, Կոնեկտիկուտ, Ֆլորիտա, Ճորճիա, Իլինոյս, Մէյն, Մերիլենդ, Մասաչուսեթս, Միչիգան, Մինեսոտա, Միսսուրի, Նեւադա, Նիւ Հեմփշիր, Նիւ Ճըրսի, Նիւ Մեքսիկօ, Նիւ Եորք, Օկլահոմա, Օրեկոն, Փենսիլվանիա, Ռոտ Այլենտ, Հարաւային Կարոլինա, Վիրճինիա, Ուիսկոնսին, Մոնտանա, Ֆեդերալ օկրուգ Ուաշինկթոն:

# ՅԵՐԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԾԱՆԱԶՈՒՄԸ ԹՈՒՐԲԻՈՅ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՐՏՔՆ Է

Շարունակում է 1-էն

անգամ ըլլալով, Եղեռնի ոգեկոչումներու տարեգրութեանց մէջ, առիթը կ'ունենայինք ունկնդրելու թուրք մտաւորական մը, Ռակըբ Զարաքօլու անունով, որ քաջութիւնը եւ համարձակութիւնը կ'ունենար, Եղեռնի ոգեկոչման ընթացքին, հայ հասարակութեան մը առջեւ ելոյթ ունենալու եւ իր մտքերը արտայայտելու ոչ միայն հայոց ցեղասպանութեան մասին, այլ նաեւ խօսելու իր հայրենիքի թուրքերոյ ներքին քաղաքական կացութեան մասին: Իր ելոյթին եւ «Կլոր» եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած յայտագրի մասին խօսելէ առաջ, պարտաւոր կը զգանք մեր գնահատանքն ու շնորհակալութիւնները յայտնելու Պոլսահայ եւ Նոր Սերունդ Մշակութային Միութեանց պատասխանատուներուն, որոնք, այդ օր, մեզի գեկոցեցին թէ շուրջ երկու տարիներէ ի վեր հետապնդող ծրագիր մըն էր թուրք մտաւորականին Լոս Անճելըս հրաւերն ու ժամանումը, որ կրնար վերջին վայրկեանին արգիլուիլ թրքական իշխանութեանց կողմէ, յատկապէս երբ կազմակերպողներուն ծանօթ էր նոյն Ապրիլի 19ին այսինքն ոգեկոչումէն երեք օրեր առաջ Ռակըբ Զարաքօլու դատական հարց մը ունէր թուրք իշխանութեանց հետ: Կարող էր նաեւ որ ոչ միայն արգիլուէր իր ճամբորդութիւնը, այլ նաեւ, արժանանար բանտարկուելու «Պատուին», ինչպէս զանազան անգամներ արժանացած էին, ինք եւ իր հանգուցեալ տիկինը: Այս առթիւ, արդեօք մեզի արտօնուած է ենթադրել թէ, լաւ իմանալով Ռակըբ Զարաքօլուի Լոս Անճելըս այցելութեան նպատակը, թուրք իշխանութիւնները կրնան «աչք գոցած» ըլլալ եւ «արտօնած» ըլլալ, իշխանութեանց ընդդիմադիր այս յայտնի մտաւորականին ճամբորդութիւնը, մանաւանդ ցեղասպանութեան մասին իր ելոյթը: Արդեօք արտօնուած է մեզի ենթադրել, թէ բան մը կայ փոխուած թուրք պետութեան մօտ, ցեղասպանութեան գծով, եւ արդէն իսկ հայ-թուրք ձիւնհալը լուրջ երկխօսութեան-տիրալի մը նախանշաններն են ասոնք: Երանի թէ...

\*\*\*

Եղեռնի 91ամեակի ոգեկոչումը կը սկսէր որոշեալ ժամուն: Կազմակերպիչ գոյգ միութիւններու անուամբ օրուան հանդիսավարուհի Տիկին Լենա Մանուկեան իր բացման խօսքին մէջ ըսաւ որ ճշմարտութեան լոյսը կարելի չէ խափանել եւ այդ լոյսն սկսած է ճաճանչել հոգիներուն մէջ նոյնինքն թուրք մտաւորականութեան, որոնք՝ ի գին ամէն գոհողութեան եւ հալածանքի, հերոսաբար կը դիմադրուէն թուրք կառավարութեան բռնութիւններն ու դատական հետապնդումները, կ'անդրադառնան Հայոց Ցեղասպանութեան իրողութեան եւ կը պահանջեն արդարութիւն: Հայ ժողովուրդին եւ իր դատին: Ան իր բարի գալուստի խօսքէն ետք, կը հրաւիրէ ներկաները վայրկեան մը յոտընկայս յարգելու Եղեռնի գոհերուն յիշատակը: Ապա, բարձրախօսով կ'ունկնդրուէին ամերիկեան եւ հայկական օրհներգները: Բեմ բարձրանալով, Նոր Սերունդ Մշակութային Միութեան ժրջանատնապետ՝ Յարութ Տէր Դաւիթեան թէ կարճ ելոյթ մը պիտի ունենար, Եղեռնի 91ամեակին առթիւ, եւ թէ ներկաներուն պիտի բացատրէր թէ ի՞նչ պայմաններու



Գոնկրեսի անդամ Ատրմ Շիֆ

տակ, կարելի եղած էր ապահովել յարգելի թուրք մտաւորականին ժամանումը Լոս Անճելըս: Ներկայ հասարակութիւնը ուշի-ուշով կը հետեւէր տրուած բացատրութեան, եւ կը գնահատէր զայն խանդավառ կերպով: Յաջորդ ելոյթով մը, կարճ եւ բովանդակալից բեմ կ'ելլէր նոր սերնդական երիտասարդ Գրիգոր Մոլոյեան, որուն ելոյթը, մաքուր հայերէնով, կը նկարագրէ Եղեռնի յաջորդող սերունդներու ինքնավատահոսութիւնը հայ ժողովուրդի ներկային, ապագային եւ հայ դատի վերջնական յաղթանակի մասին:

Խանդավառութեամբ կ'ընդունուէր նաեւ ոգեկոչման ներկայ գտնուող եւ ամերիկեան գոնկրեսն ներս տարիներէ ի վեր ցեղասպանութեան ճանաչման համար գնահատելի աշխատանք տանող Պրն. Ատրմ Շիֆը, եւ լաւատեսութիւն կը յայտնէր որ այդ աշխատանքը, թէեւ դանդաղ եւ սակայն վստահօրէն կ'ուղղուի դէպի յաջողութիւն:

Օրուան գլխաւոր բանախօս, թուրք հրատարակիչ եւ քաղաքական մտածող Ռակըբ Զարաքօլուն ներկայացնելու եւ միեւնոյն ատեն Պոլսահայ Միութեան խօսքը ըսելու համար, բեմ կը բարձրանար գաղութի ծանօթ անձնավարութիւն, եւ Պոլսահայ Միութեան մշակութային յանձնախումբի պատասխանատու Տօքթ. Յովհաննէս Գուլաք Աւետիքեան, որ իր գրաւոր ելոյթին մէջ նոյնպէս կը յայտնէր իր գոհունակութիւնը թուրք մտաւորականին հրաւերին յաջող կարգադրութեան համար, եւ կու տար կենսագրական հակիրճ տեղեկութիւններ իր մասին: Պիտի իմանայինք թէ Զարաքօլու ամուլը հրատարակչական հաստատութիւն մը ունին Պոլսոյ մէջ, որ բանի մը անգամներ ահաբեկչական գործողութեանց ենթարկուած է: Ինքը, Ռակըբ, իբրեւ մարդկային իրաւանց կազմակերպութեան պատասխանատու, քաղաքական ընդդիմադիր գործիչ թուրք իշխանութեանց, եւ մանաւանդ հայոց ցեղասպանութեան ծանօթ եւ այդ ցեղասպանութեան ճանաչումը պահանջող, բազմաթիւ անգամներ բանտարկուած էր թրքական իշխանութեանց կողմէ:

Խանդավառ ծափերով բեմ կը բարձրանար Պրն. Ռակըբ Զարաքօլու: Միջահասակ, սպիտակ առատ եւ ցրուած մազերով, իսկական մտաւորականի տիպար մըն է ան: Անգլերէնով պատրաստուած իր ելոյթը, գոր մասնակիօրէն հայերէնով ներկայներուն հրամցուց Յ. Տէր Դաւիթեան, կարգաց հանդարտութեամբ, յստակութեամբ եւ զիտնական յատուկ բեմադրութեամբ:

# ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐ

Շարունակում է 1-էն

## ՀՈԳԵՅԱՆԳԻՍ

Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արքեպս. Տէրտէրեան, Մոնթեպելլոյի Նահատակաց Յուշարձան այցելեց Ապրիլ 24ին եւ շրջապատուած քահանայ հայրերով հոգեհանգստեան պաշտօն կատարեց:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՔ

Կիրակի, Ապրիլ 23ին, կ.ե. Ժամը 4:30ին Մոնթեպելլոյի Նահատակաց Յուշարձանին առջեւ տեղի ունեցաւ պաշտօնական հոգեհանգիստ մասնակցութեամբ քոյր եկեղեցիներու: Տեղի ունեցաւ նաեւ քաղաքական հաւաք, ուր ելոյթ ունեցան հայ եւ ամերիկացի անձնավարութիւններ: Ելոյթ ունեցաւ նաեւ Պոլսահայ Միութեան եւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան հրաւերով քաղաք այցելող թուրք մտաւորական Ռակըբ Զարաքօլու: Բոլոր ճառախօսներն ալ դատապարտեցին 91 տարիներ առաջ գործադրուած ցեղասպանութիւնը, պահանջելով անոր ճանաչումը համայն աշխարհի կողմէ եւ արդարութեան գործադրութիւնը ի նպաստ հայ ժողովուրդին:

## ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՊՍԱՐԱԳ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՁ

Ապրիլ 23ին, 2006, Փաստինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ հանդիսաւոր պատարագ նուիրուած Մեծ Եղեռնի 91րդ տարեդարձին եւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Հիմնադրութեան 100-ամեակին: Օրուան պատարագին էր Հայաստանի Գուգարաց Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Սեպուհ Եպս. Չուլճեան:

Թեմիս բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արքեպս. Տէրտէրեանի նախագահութեամբ տեղի ունեցաւ նաեւ հոգեհանգիստ Մեծ Եղեռնի մէջ ու կէս միլիոն գոհերու ինչպէս նաեւ Հ.Բ.Լ.Մ.ի հիմնադիր բարերարներու յիշատակին: Արարողութեանց ներկայ էին Հ.Բ.Լ.Մ.ի ղեկավարութեան եւ տարբեր կազմակերպութեանց ներկայացուցիչները:

Այս առթիւ խօսք առաւ պատարագիչ Գերշ. Սեպուհ Եպս. Չուլճեան եւ շեշտը դրաւ պահանջատէր հայ ժողովուրդի արդար դատին՝ Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման հետապնդումին վրայ:

Իր հերթին՝ ելոյթ ունեցաւ Թեմիս բարեջան առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպս. Տէրտէրեան: Ան առաւելաբար անդրադարձաւ ասկէ ճիշդ 100 տարիներ առաջ Պօլոս Նուպար Փաշայի եւ իր ընկերներուն կողմէ հիմնադրուած Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ անոր բերած ազգօգուտ մեծ ծառայութեան:

Բեմական ճարտասան, եւ ունկնդրողները առինքնող խօսող մը էր ինք, եւ պէտք ալ չունէր այդպէս ըլլալու: Մեզի համար հետաքրքրականը եւ հաճելին այն էր որ պահ մը մոռցած թէ բեմի վրայ գտնուողը թուրք-օղլու թուրք մըն էր, մենք ունկնդրեցինք մտաւորական մը որ կը խօսէր Օսմանեան կառավարութեան եւ Երիտ Թուրքերու կողմէ, հայ ժողովուրդի վրայ գործադրուած, պետականօրէն ծրագրուած ցեղասպանութեան մը մասին որ ցարդ կը մնար չճանչցուած, թէ մարդկային իրաւունքներու ոտնակոխման գծով եւ թէ եղած անարդարութեան համար հատուցման գծով: Ան նաեւ

յուրիւրներուն թէ Մայր Հայրենիքի եւ թէ սիրուքի տարածքին: Օրհնեց բոլոր բարերարներու յիշատակը եւ նորանոր յաջողութիւններ մաղթեց Հ.Բ.Լ.Մ.ի ներկայ ղեկավարութեան:

## Հ.Բ.Լ.Մ. 100-ԱՄԵԱԿԻ ՅՈՒՇԱՏՈՆԸ

Կիրակի, Ապրիլ 23ին, 2006, Փաստինայի Հ.Բ.Լ.Մ.ի Արքեպս. Մանուկեան Համալիրի կեդրոնի շրջապակին մէջ, տեղի ունեցաւ Հ.Բ.Լ.Մ.ի 100-ամեակին նուիրուած խաչքարյուշակոթողի բացման եւ օծման հանդիսութիւնը, նախագահութեամբ՝ Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արքեպս. Տէրտէրեանի: Խաչքարը նուէրն էր Տօքթ. Գէորգ եւ Տիկին Սեսիլ Քէշիշեաններու, որոնք անձամբ բացումը կատարեցին անոր: Այս առթիւ ելոյթ ունեցաւ Յովնան Սրբազան պանծացնելով Հ.Բ.Լ.Մ.ի անմահանուն ղեկավարներու խնկելի յիշատակը:

Հայանպաստ իր արարքներու կապակցութեամբ ելոյթ ունեցաւ քոնկրետական էտրմ Շիֆ:

Այնուհետեւ տեղի ունեցաւ պաշտօնական ճաշկերոյթ, որուն ներկայ էին Հայաստանի աւագ հիւպատոս Տէր եւ Տիկին Գաղիկ Կիրակոսեան, ինչպէս նաեւ տարբեր յարանուանութեանց, քաղաքական, մշակութային եւ բարեսիրական կազմակերպութեանց ու հայ մամուլի ներկայացուցիչներ, թիւով շուրջ 800 հոգի:

Տօնականօրէն շքեղ զարդարուած սրահին մէջ կը տեսնուէին Հ.Բ.Լ.Մ.ի հիմնադիրներու եւ նախագահներու նկարները:

Այս առթիւ՝ հայ ժողովուրդի մեծագոյն բարեսիրական կազմակերպութեան անցած 100 տարուան ուղիին եւ հայանպաստ մեծ ծառայութիւններուն մասին հանգամանօրէն արտայայտուեցան Արժ. Տ. Վարդան Աւ. Քհնյ. Տիւրկէրեան, Տիկին Սէսիլ Քէշիշեան եւ Պրն. Ենովք Պալիկեան:

Գործադրուեցաւ զեղարուեստական պատշաճ յայտագիր մը, մասնակցութեամբ տուտակահարներու համոյթին, Հ.Բ.Լ.Մ. Մանուկեան-Տէմիրեան Վարժարանի ասմունքողներու խումբին, որոնց բարձրակազմարուած գնահատուեցաւ բոլորէն: Առանձնապէս ուշադրաւ էր խոստովանելից պատանի ասմունքող՝ Դաւիթ Ադամեանը:

Ճաշկերոյթի հանդիսավարութիւնը ձեռնհասօրէն կատարեց Տօքթ. Կիրակոս Մինասեան:

Սոյն յիշարժան յուշատօն-ճաշկերոյթը վերջ գտաւ Գուգարաց շրջանի առաջնորդ Գերշ. Տ. Սեպուհ Եպս. Չուլճեանի հայ բարեգործներուն ուղղուած ներբողական ելոյթով եւ «Պահպանիչ» աղօթքով:

Կը շնորհաւորենք կազմակերպիչները այս յիշարժան եւ «լիցքաւորող» գոյգ նախաձեռնութիւններուն համար:

Երեկոյն իր աւարտին կը համայն գեղարուեստական յայտագրով:

**ԱԶԳԱՅԻՆ**

**ԿՐԿԻՆ 24 ԱՊՐԻԼ**

**ԱՐԱ ՍԱՐԳԻՍԵԱՆ**  
**(ՊԱՐՄԿԵՐԷՆԻՑ ԹԱՐԳՄԱՆԵՑ՝**  
**ՆՈՒԱՐԴ ԶԱՐԳԱՐԵԱՆ)**

Ապրիլ ամիսը, յատկապես 24 Ապրիլը ամեն գտարիևն հայի համար խորը վիշտ եւ անդարմանելի ցաւ է, մի ցաւ որ հայը չի կարող չսգալ եւ չի կարող մոռանալ, մինչեւ վերջնական ձեռքբերումը իր ոսնահարուած եւ կորցրած իրաւունքների:

Իննասուներեք տարի անցաւ եւ թէ 91 տարի եւս անցնի ու հայոց եղեռնի յանցագործները, վայրի թուրք դահիճները, նրանց գլխաւորող Երիտ Թուրքերը, եւ նրանց քաղաքականութեան հետեւորդները, կատարուած իրականութեան համար ներողութիւն չինդրեն, մեր գրաւուած հողերը, կորցրած իրաւունքները եւ թալանուած գոյքերի փոխարժէքը՝ անմոռանալի գոհերի ժառանգորդներին չվերադարձնեն, հայ ազգի բողոք եւ պայքարը մինչեւ պահանջների կատարեալ փոխհատուցում, շարունակուելու է: Եւ այսօր այսպէս կոչուած «քաղաքակիրթ» աշխարհը եւ Եւրոպայի մարդու իրաւունքների պաշտպան կառավարութիւնները, որը ցաւօք պատմութեան փաստացի վկայութեամբ, այս յանցագործութեան մասնակիցներից էին, յանուն արդարութեան եւ իրենց ներկայացուցիչների միջոցով գործում մեղքերի քաւութեան համար, պէտք է ի դիմաց տանջած ու տուժած բայց դիմադրող, պայքարող, ապրող ու յարատեւող հայ ազգի պահանջների դրական կեցուածք կիրառեն եւ օժանդակեն դրանց վերջնական փոխհատուցման: Եթէ ոչ, պատմութեան թերթերը՝ որ ստացել են պողպատի ամրութիւն՝ կը խայտառակեն հենց իրենց՝ գործած ամօթալի յանցագործութեան համար:

Հայկական գանգուածային ցեղասպանութիւնը որ 1894 թուից եւ տիրահռչակ Աթթիւհիւմիտ Բ.ի օրօք սկսուեց, մինչեւ երկու տասնեակ՝ 20րդ դարը Երիտ-Թուրքերի իշխանութեան ձեռքով եւ որոշ եւրոպական երկրների համագործակցութեամբ շարունակուեց (որին վերեւում յիշատակեցի, յետագայում մանրամասնութեամբ գրի եմ առնելու) եւ այսօր 91 տարի յետոյ Օսմանեան յանցագործ իշխանութեան եւ Երիտ-Թուրքերի տեղապահները (ժառանգորդները) ժխտում են թէ երկու միլիոն հայ եւ յոյների ցեղասպանութիւնը իրականութիւն չունի, նրանք մինչեւ անգամ փաստաթղթերը եւ պատմական վկայութիւնները որ արտասահմանեան երկրների կառավարական արխիւներում մինչեւ անգամ թանգարաններում գոյու-

թիւն ունեն, հերքում են այն միտումով իբր քաղաքական ինտրիքներով կարելի է ճշմարտութիւնը հերքել: Այդ կարելի է ճշմարտութիւնը ժամանակաւոր թաքցնել բայց արեւն ու լուսինը միշտ ամպի տակ չեն մնալ ճշմարտութիւնը ի վերջոյ կը յաղթանակի եւ անպատուութեան դրոշմը կը խարանի ուրացողի դէմքը: Եւ այսօր զարմանալիօքն Եւրոպական որոշ երկրներ եւ մինչեւիսկ ամերիկեան կոնգրեսմեններն ու սենատորները քսանմեկերորդ դարում այս պարզ ճշմարտութիւնը (որ իրենց իսկ քաղաքական ներկայացուցիչների եւ կրօնական միսիոնարների միջոցով մանրամասնօրէն նկարագրուած է սոյն ժամանակուայ տաճկաստանի ամենօրեայ ոճրագործութիւնները առօրեայ պաշտօնական գեկոյցներին մէջ եւ բոլորը պատմագիտօրէն փաստուած եւ վկայուած է) անխղճօրէն հերքում են:

Այդ ինչպէ՞ս մի կառավարութեան ղեկավարի հակառակ արտայայտած միայն մի նախադասութիւնը, իսրայէլի կառավարութեան դիմաց՝ աշխարհը ոտքի հանեց բայց մի ամբողջ մորթուած ազգի պահանջատիրութեան բողոքի ձայնը լսելիս այդ նոյն աշխարհը պայանձուում է:

Արդեօք այս անտարբերութիւնը 21րդ դարում դեռեւս ընդունելի է: Ո՛ւր են այն քաղաքակիրթ եւ մարդասէր երկիրները որոնք պատրաստ են թուճալին համաճարակի կասեցման համար հսկայական գումարներ յատկացնելու, իսկ մէկ դար առաջ կատարուած ոճրագործութիւնը այսպէս հանգիստ չնկատեն: Անպայման այսօրուայ քաղաքական մարդիկ անցեալի պատմութեան հանդէպ հետաքրքրութիւն չունեն, կամ եթէ լաւատեղեակ են իրենց շահամոլութիւնը բթացնում է իրենց խիղճը:

Այնուամենայնիւ պարոնայք քաղաքական դէմքեր թէկուզ դուք ցուցաբերէք ձեր մարդկային իտէալները թէկուզ ոչ, կամ լինէք արդար դատաւոր թէ ոչ, պատմութեան էջերը իրականութիւնն ու ճշմարտութիւնը ի վերջոյ երեւան է բերելու մինչ այն երբ ճշուածները կարողանան վրիժառու լինեն:

Սոյն տարուայ Մարտ 24ին մի խումբ քալիֆորնիաբնակ հայեր բողոքի ցոյց կազմակերպեցին Թուրքիոյ պաշտպանութեան նախարարի իջեւանած հիւրանոցի առաջ Պէլլըրլի Հիլզում եւ կրկին ներկայացրին իրենց նախորդ տարիների պահանջներն ու բողոքը, գուցէ այս ոճրագործների ներկայացուցչի բթացած խիղճը արթնանայ, բայց ափսոս նա եւս իր

պայերի պէս խուլ ականջներ, կոյր աչքեր եւ մթազնած սրտի տէր է, իսկ վստահաբար կը հասնի այն օրը երբ մարդկութեան արթուն խիղճը եւ նոյն թուրք ժողովուրդը անմոռանալի ոճրագործութեան ներկայացուցիչներին կը ստիպէ որ ի դիմաց անմեղ գոհուածների սուրբ հոգուն՝ ծունկի գան ու մեղանչեն, վստահօրէն այդ օր չի ուշանայ:

Այժմ ձեր ուշադրութիւնը հրաւիրում եմ հետեւեալ մի քանի պատմական եւ վաւերական փաստերին՝

Տիկին Ժան Մարի Քարզու՝ Տրանսսցի գրող իր «Պատմական եւ Քաղաքական Ուսումնասիրութիւններ եւ վերլուծումներ» գրքի մէջ այսպէս է արտայայտուել...

Օսմանեան պալատականների, հրամանատարների եւ նրանց գործակատարների ցուցաբերած դաժան քինախնդրութեան՝ յատկապէս անմարդկային անխղճութեան ունակ լինելուն՝ այն փաստը որ նրանք ամէն անգամ աւելի գիտակցօրէն ու աւելի գաղափարաբար վայրագութեամբ էին յոշոտում հայերին, ոչ մի կասկածի տեղիք չի տալիս...

Երբ ցեղասպանութիւնը միայն մի անգամ կատարուէր, կարելի է «դիպուածի» կամ «ստիպողականութեան» կամ «պարտադրանքի» վերագրել, բայց երբ այդ ոճրագործութիւնը կրկնում է ոչ պակաս քան 24 անգամ, միայն դա դիտաւորեալ կարող է լինել եւ ուրիշ ոչինչ: 24 անգամ կրկնուած հայկական գանգուածային սպանդների իշխանութեան օրօք ընդհանուր հաշուով 2,377072 հայ մարդ սպանուել եւ ոչնչացել են:

Հայաստանութիւնը՝ իրականութեամբ մէջ մարդկային հոգու ցայժմ չբացայայտուած՝ ամենագուռելի եւ ամենաստոր ծալքերի ցուցադրումն է:

Նախմ Բէկի յուշերի (1) մէջ կարդում ենք, «հայ պատանու մարմինը կրակների բողբոջ մէջ նետելուց առաջ, դաշոյնով պատառոտեցին մի հայ տղամարդ իր տան կտուրում պաշտպանելիս, թուրք կամակատարները նրանց ձերբակալելուց յետոյ, կրակի մէջ շիկացած երկաթով աչքերը խոռոչներից հանեցին... եւ կիսակենդան մարմինը դանակներով կտոր-կտոր արան... եւ էլի Նախմ բէկի յուշերում կարդում ենք... թուրք գիւնուորները մի յղի հայ կնոջ բռնաբարելուց յետոյ պատուում են որովայնը եւ չծնուած երեխային գարկում քարին...»

Տոբթ. Քարլ Հանա Իստամբուլաբնակ գերմանացի բժիշկը սրտակեղծք սպանութիւնների ականատես վկայներից մէկը, Պեռլինի բժշկական կեդրոնին ներկայաց-

րած իր գեկոյցների մէջ պատմում իրենց տներից արտաքսուած հայերի կարաւանի մասին որ Օսմանեան գիւնուորները այդ դժբախտներին ուզում էին վանալ լիճում խեղդամահ անել... 20ից 25 հոգի կին, տղամարդ եւ երեխաների երկու բաց սայլով քշում էին դէպի լիճը, բոլորին գոյգ-գոյգ կապել էին իրար, աջ եւ ձախ ձեռքերը մի կնոջ ու մի տղամարդու կարծ շղթայով իրար էին միացրել եւ կողպել էին կողպեքով, երեխաների ձեռք ու ոտքը չուանով էին կապել եւ մեծահասակների մէջ տեղաւորել:

Ինձ ասացին երկու երեխայ կարմրուկ ունեն եւ երեք օր է միայն ջուր են խմել... հայ գերիները ինձ տեսնելու նպէս, կարծես երկնային հրեշտակ էին տեսել, շղթայած ձեռքերը ինձ երկարելով օգնութիւն էին աղերսում... խեղճերը չգիտէին որ... իմ հայրենակիցներս Ստամպուլում այս հրեշտային ցեղասպանութեան հրահրողներից են... այս տեսարանը տեսնելով այդ պահին հանդիպեցի գիւնուորական հրամանատարին, ցանկացայ երկու հիւանդ երեխաներին հետս վերցնել եւ նրանց բուժել, նա որ Զամալ Աթաշ էր կոչուում պատասխանեց՝ սրանց վաղը առաւօտեան վանալ լիճն ենք թափելու, եթէ դուք բարիացակամ բժիշկ էք, քաղաք գնացէք եւ թուրք երեխաներին բժշկէք... Որքան խնդրեցի չհամաձայնուեց, ես էլ Ս. Մննդեան տօների արձակուրդը չաւարտած՝ վերադարձալ Ստամբուլ եւ այնտեղ տեսածներս պատմեցի գերմանացի դեսպանին... Ես ի գարմանս եւ սարսափս՝ ուսերը վեր թօթուեց եւ ասաց «մենք իրաւունք չունենք Օսմանեան կառավարութեան գործերի մէջ խառնուենք, հայերը աւելի մեծ պատժի են արժանի, նրանք մեր թշնամիների կողմնակիցն են... երբ գերմանական կայսրութեան դեսպանատնից դուրս էի գալիս ինքս ինձ մտածում էի կարծես այս քաղաքականութիւնը պատճառ դարձաւ որ բոլորը վարակուեն լկտիութեամբ, եսամոլութեամբ եւ փտախտով:

Ես հիմա հաւատացած եմ որ վայրագ սպանութիւններն ու գազանային սանձագերծ ցեղասպանութիւնները, Օսմանեան իշխանութեան եւ Երիտ-Թուրքերի օրօք, աւելի ուժեղ երկրների միջնորդութեամբ էր թելադրուում կամակատարներին, եւ նրանք էին թշնամութիւն արծարծում ժողովուրդների մէջ եւ հակառակութիւն սերմանում՝ ի շահ իրենց կեղտոտ նպատակների եւ շահամոլութեան...

Այս սոսկալի յուշերի վկայութեամբ, մէկը մի թուրքի Նախմ

Շար.ք էջ 18



**AAA INSURANCE SERVICES**  
 Licensed Agent - California License #1884007  
 Elise Stiefel of California  
 1975-2005  
**30th ANNIVERSARY**  
 E-mail: BMaronian@AOL.com

**INSURANCE COVERAGE CAN HELP YOU FINANCIALLY**  
 ԵՐՔԵՔ ՈՒՑ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵՆԻՄ  
 ՏԵՐ ԱՊԱՅՈՒՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**BEDROS, SIAMANTO MARONIAN**

818 500-9585 AAA INSURANCE SERVICES 885 E. Broadway, Glendale, CA 91205  
**ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"**



# ՏԱՌԱՊԱՆՔԻ ՈՒՂԻՈՎ

(ԱԿԱՆԱՏԵՍԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ)

## ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ

1915 թ. Երիտթուրքերը կազմակերպեցին և սկսեցին իրացնել իրենց հրեշտակի ծրագիրը՝ հայ ժողովրդին ի սպառ վերացնելու աշխարհի երեսից: Նրանք չխնայեցին ոչ մի հայի՝ ո՛չ ծերին, ո՛չ երեխային իրենց բնորոշումով (որը թուրքիացի գերիշխանութեան տակ էր գտնուում): Վերևից տրուած հրամանը կատարող թուրք պաշտօնեաները անխտիր աքսորեցին բոլոր հայերին, իսկ հրամանը չկատարողները կամ հրաժարուցեցին, կամ ազատուցեցին իրենց պաշտօններից, կամ էլ պատժուցեցին կառավարութեան կողմից, երբեմն ընդհուպ իրենց կեանքով հատուցելով այդ արարքի համար: Աքսորուողների մեծ մասին սկսեցին կոտորել դեռ իրենց բնորոշումներից չհեռացած՝ ճանապարհին, իսկ մի կերպ ողջ մնացածներին քեցեցին Միջին Արևադարձի սահմանները: Ճանապարհին սոված ու ծառաւ, շատերը հազար ու մէկ հիւանդութիւններով բռնուած, սարսափելի պայմաններում, աւանդում էին իրենց հոգին: Չնայած սկզբում ձեռք չտուին թուրքական բանակում ծառայող հայերի ընտանիքներին, բայց այդ երկար շտապի ընթացքում զինուորական ծառայողները իրենց ընտանիքներին էլ աքսորեցին: Թուրքական պետութեան կազմակերպմամբ հայերի կոտորածին ակտիւօրէն մասնակցեցին նաև քրդերի մեծ մասը: Բայց գտնուեցին թուրք և քուրդ ազնիւ մարդիկ ևս, որոնք փրկեցին որոշ հայերի կեանքը:

Կիլիկիայի Իսկենդերունի Սանջաքի հայ բնակչութիւնը, որի մի մասն էին կազմում Բէյլանի և նրա շրջակայքի գիւղերի հայերը, չէին կարող խուսափել այդ ճակատագրից: Նշուած գիւղերում միայն հայեր էին ապրում, իսկ Բէյլանը գտնուելով կիրճի մէջ, դէմ-դիմաց՝ մի կողմում բնակուում էին հայերը, որը կոչուում էր «էրմենի մահալլե-սի» (Հայկական թաղամաս), իսկ միւս կողմում՝ թուրքերը՝ «թիւրք մահալլե-սի» (Թուրքական թաղամաս): Թուրք բնակչութիւնը գերակշռող էր Բէյլանում: Բայց սնտեսութիւնը համարեա ամբողջութեամբ հայերի ձեռքին էր: Հետևաբար այս շրջանի բոլոր հայերը խօսում էին թուրքերէն, հայերէն, մասամբ էլ քրդերէն:

\*\*\*

Իրական եղելութիւնը, որը ներկայացնում եմ ընթերցողին, ինձ պատմեց բէյլանցի Յակոբ Քեհէյեանը՝ Յարութիւն Քեհէյեանի (Քեհեա Արթինի) տղան, իսկ Յակոբի տղան՝ Պետրոսը իմ հարեանն է: Այսօր Յակոբը կնոջ՝ Վարսենիկի հետ Պետրոսի տանն էր: Ես խնդրեցի նրանց պատմել Մեծ Եղեռնի մասին, եթէ որևէ բան լսել են իրենց ծնողներից կամ ուրիշներից: Նրանց պատմածը որպէս ականատեսի վկայութիւն 1915 թ. հայերի Յեղասպանութեան մասին, ներկայացնում եմ ընթերցողին: Պատմում է Յակոբը:

Ինչպէս բոլոր տեղերում, Բէյլանի և շրջակայ գիւղերի հայ բնակչութեանը ևս 3 օր ժամանակ են տալիս պատուաւորու աքսորի, որոնք միայն երեխաներ ու մեծահասակներ էին (բոլոր երիտասարդներին բանակ էին տարել): Թէ ի՞նչ դժուարութիւններով պատրաստուեցին նրանք և ի՞նչ կարող էին տանել

իրենց հետ, ողջ մնացածներից շատերը պատմել են իրենց գաւազներին:

Շրջակայ գիւղերի հայ բնակչութիւնը հաւաքեցին բերին Բէյլան և այնտեղի հայ բնակիչների հետ միասին քեցեցին դէպի Տէր Զօրի անապատները: Միայն ասելն է հետ: Ով որ չորքոտանի կենդանի ունէր, ինչ որ կարողացել էր ընտրել տնից իր հետ վերցնելու համար, մի մասը բարձեց նրան, իսկ մի մասն էլ ընտանիքի անդամները վերցնելով իրենց ունեւորները դէպի ...: Ո՞վ էր սովոր այդպիսի պայմաններին, որ դիմանար: Կամաց-կամաց նրանք թեթևանում էին իրենց բեռներից: Գիշեր ու ցերեկ քայլերով, ուժասպառ էին եղել: Առանց նրանցից դրամ կորզելու, նոյնիսկ չէին թողնում ճանապարհին հանդիպած առուակին կամ լճակին մօտենալ իրենց ծառաւը յագեցնելու համար: Խումբը ուղեկցող ջանդարմաների (գինուորների) մօտ, յանուն փողի աստիճանաբար մեռնում էր ազնուութիւնն ու խիղճը, և նրանք դառնում էին գիշատիչներ, սկսելով իրենց անմարդկային արարքները աքսորեալների նկատմամբ: Չէ՞ որ իշխանութիւնը նրանց տուել էր այդ իրաւունքը, որ հայի ունեցուածքը թալանողը, նրան սպանողը, կանանց և աղջիկներին բռնաբարողը, Մոհամմետի կրօնական օրէնքով արքայութիւն կը գնայ: Ո՞վ ձեռքից բաց կը թողնէր այսպիսի առիթը՝ հարստանալու և իր հաճոյքներին բաւականութիւն տալու: Ինչպէ՞ս չ'օգտագործէր այս առիթը թուրք անգրագետ, սպիտակ, անկիրթ ամբողջը, որը սովոր էր միայն թալանելու, սպանելու, բռնաբարելու և ուրիշ ունեցուածքին տիրելու:

Բէյլանից դուրս եկած քարաւանի հոծ բազմութիւնը կամաց կամաց նօսրանում էր անմարդաբնակ վայրերում, սարերում ու ձորերում, որտեղ ճանճն իսկ չէր սոգում: Ընտանիքների անդամները կորցնում էին իրար, շատերին սպանում էին նրանց հարազատների աչքի առջև: Մի խօսքով, թուրք ուղեկցող ջանդարմաների այլանդակութիւններին չափ ու սահման չկար, չէ՞ որ իրենց արտօնութիւն էր տրուած պետութեան կողմից ուզածն անելու: Իսկ առանձին իմբերով հայերին դաժանօրէն կոտորում ու թալանում էին նաև այդ նպատակով թուրք կառավարութեան թոյլտուութեամբ բանտից ազատուած գող-աւազակ-մարդասպանները: Ահա այսպէս ոչնչացուելով, աքսորեալները շարունակում էին իրենց ճանապարհը՝ ետևում թողնելով անթաղ մեռելներին և կիսամեռ հարազատներին: Ի՞նչ կարող էին անել, երբ նոյնիսկ չէին թողնում մօտենալ նրանց: Որոշ մարդիկ փորձում էին փախչել, բայց այդ միշտ չէր յաջողուում, սպանում էին փախչողին կամ բռնի նորից խառնում աքսորեալների քարաւանին: Նոյնիսկ փախչելին էլ, յայտնի չէր, թէ ո՞ւր կարող էին գնալ, որ անվտանգ լինի, նամանականոց հեռացած լինելով իրենց բնակավայրերից, գտնուում էին անծանօթ վայրերում: Բայց, բնականօրէն, ազատութեան մէջ մարդը կարող էր տնօրինել իր կեանքը ...:

Եւ այսպէս, երեխաների մեծ մասը որք ու անտէր մնացած, կոյս աղջիկները պղծուած, շատերը սպանուած, կէսը կիսամեռ՝ աղաչում էին Աստուծուն, որ մի րոպէ առաջ հոգիներն առնի և ազատի տանջանքները:

Մուժ գիշերին աքսորեալների քարաւանը կանգ է առնում անմարդաբնակ տարածութեան մի բլուրի վրայ: Մի խումբ բէյլանցիներ «լեզու են գտնում» ուղեկցող ջանդարմաների հետ՝ կաշառելով նրանցից մէկին, որպէսզի փախչեն: Պայմանաւորուում են մուժ գիշերին մէկ-մէկ հեռանալ, որպէսզի նրանց չնկատեն միւս հակող ջանդարմաները...: Աքսորականների քարաւանից զգուշութեամբ հեռացող իւրաքանչիւր բէյլանցի փախչում է, չիմանալով թէ ուր է գնում, միայն թէ ազատի կեանքը:

Փախչողներից է եղել նաև պատմողի՝ Յակոբի աները, որի անունը նոյնպէս Յակոբ է և այն ժամանակ՝ մօտ 12-13 տարեկան: Ծնողներին և հարազատներին կորցրած Յակոբը, որոնց մեծ մասին թուրքերը սպանել էին, մնում է շուտարած, չի կարողանում կողմնորոշուել, թե ո՞ւր գնալ այս մուժ գիշերով: Բայց մտածելու ժամանակ չկար, ամէն րոպէ կարող էր նորից յայտնուել աքսորականների քարաւանում, ուստի գլուխն առած փախչում է անյայտ ուղղութեամբ և վտանգից բաւական հեռանալուց յետոյ զգում է, որ ոտքերը չեն ենթարկուում իրեն: Սովածութիւնից, հոգնածութիւնից ուժասպառ ու հիւժուած, նստում է մի քիչ հանգստանալու ու ... քնում է, թէ ո՞ւրքան, ինքն էլ չգիտի: Երբ արթնանում է, զգում է, որ ուժերը որոշ չափով վերականգնուել են: Վերկենալով քայլերն ուղղում է դէպի առաջ, չիմանալով, թէ ուր: Բաւական գնալուց յետոյ լոյսի աղօտ կէտ է նկատում հեռուում, որն իրեն կենսի յոյս ու ուժ է ներշնչում: Ոտաբերիկ, պատուտուած-զգզգուած հազուատներով շարժուած է դէպի այդ յոյսի լոյսը, որը կամաց-կամաց մեծանում է և արդէն մի փոքրիկ գիւղի նախա-նշաններն են երևում: Վերջին ուժերը լարելով հասնում է գիւղը, որը քրդական գիւղ էր ու սկսում է քայլել փողոցներով: Մի քրդուհի լուսամուտից նկատելով Յակոբին, զգում է, որ օտար է, դուրս է գալիս տնից և կանչում նրան: Նա մօտենում է քրդուհուն: Նա զգում է, որ Յակոբը հայ է: Որոշ հարց ու փորձից յետոյ, քրդուհին Յակոբին ներս է տանում, ուտելիք է տալիս, որից յետոյ թողնում է, որ հանգստանայ: Քիչ անց ամուսինը ոչխարների հոտի գլխին հասնում է տուն և սկսում է նրանց տեղաւորել ախոռում: Այդ պահին կինը մօտենում է մոմանտուն ու պատմում Յակոբի մասին, աւելացնելով, որ եղբայրդ մի տղայ էր փնտրում ոչխարները արածացնելու համար, այս տղան շատ յարմար է, տար թող օգնի ու այդ հոգսից ազատի նրան: Կնոջը լսելուց յետոյ

ամուսինը ուրախանում է նրա խոհեմութեամբ, և նաև, որ կարող է օգնել եղբորը, որն ապրում է մօտակայ գիւղում: Նոյն գիշերն էլ Յակոբին տանում յանձնում է եղբորը: Եղբայրը նոյնպէս ուրախանում է, որ իրեն օգնական գտնուեց: Նա ունէր մի փոքրիկ տղայ:

Յակոբը սոված ու ծառաւ երկար օրերի տանջանքներից յետոյ կմախք էր դարձել, մի կերպ հագիւ էր կանգնում ոտքի վրայ: Բնականօրէն այդ վիճակով նա չէր կարող ոչ մի գործ անել: Ուստի ամուսինը կնկան յանձնարարում է Յակոբին լողացնել, հագուստ, կօշիկ յարմարեցնել, կաթնամթերքով լաւ կերակրել, որպէսզի ուժը վերականգնուի և սկսի ոչխարները արածացնել: Նրան յատկացնում են ախոռի նախաշէմի փոքրիկ միջանցքը: Գետինը փռում են մի կտոր թաղիք (քեչէ) և վրան հարմարեցնում անկողինը՝ այն համարելով Յակոբի «ննջասենեակը»:

Գարուն էր: Ոչխարների ծնի ժամանակը: Նորածին գառների համար ախոռի մէջ մսուրներ կային: Նրանց պէտք էր հանել մսուրներից և տանել մայրերի մօտ կերակրելու: Քուրդը Յակոբին յանձնարարում է այդ գործը: Յակոբը փորձում է նորածին գառը հանել մսուրից, բայց չի կարողանում, ուժը չի պատում, այնքան հիւժուած էր: Ուստի քուրդը նրան որոշ ժամանակ էլ թողնում է, որ կազդուրուի, որից յետոյ տանում է իր հետ ոչխարները արածացնելու, միաժամանակ Յակոբին սովորեցնում արտափայտի տեղերը: Որոշ ժամանակ գնալուց յետոյ, երբ զգում է, որ Յակոբը արդէն ամէն ինչ սովորել է, ոչխարների արածացնելու պարտականութիւնը լրիւ թողնում է Յակոբի վրայ:

Բաւական ժամանակ յետոյ, Յակոբը կազդուրուում է, սկսում է յանձնարարուած գործը կատարել բարեխղճօրէն և փառք է տալիս Աստուծուն իր բախտի համար: Տեսնելով նրա լաւ աշխատանքը և նուիրուածութիւնը, նրան տեղափոխում են աւելի յարմարաւէտ մի հիւղակ:

Անցնում են առաջին տարիները: Յակոբը յաղթանդամ պատանի է դառնում, սիրում է իր գործը և բաւականութիւն է ստանում իր աշխատանքից:

Բայց վերջին ժամանակներս, գիշերները Յակոբը աղմուկ է լսում իր աղայի ննջարանից, որը շարունակ կրկնում է ամէն գիշեր: Նա միամտօրէն մտածում է, որ մարդ ու կին են, հազար ու մէկ հոգսեր կ'ունենան, ինչ ուզում են թող անեն, ինքը ծառայ է այնտեղ, ի՞նչ իրա-

Շարք. էջ 18

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ՇԱՄԱՐ) ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՇԱՄԱՐ**

**1060 N. ALLEN AVE. PASADENA ՄԱՆՐԱՍԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԸԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680 (626) 398-0506**

[Http://www.massisweekly.com](http://www.massisweekly.com)

# ԱՊՐԻԼ ԵՒ ՏԵՍՆԵԼ ԽՕՍԻԼ ԹԵ՞ ԱՂՄԿԵԼ

## ՅԱՐՈՒԹՅՆԻ ԴԱՒԻԹԵԱՆ

### ՊԱՏԿԵՐ Ա.

Եղեռնի ոգեկոչման հանդիսություններն մը առթիւ, հայկական կազմակերպութիւն մը, որպէս գլխաւոր բանախօս կը հրաւիրէ թուրք մտաւորական մը եւ գեղարուեստական յայտագրի բաժնով, մեղմ երաժշտութեան կողքին կը հնչէ նաեւ աշխոյժ երաժշտութիւն:

Յիսնամեակ մը առաջ սրբապղծութիւն պիտի նկատուէր այսպիսի ձեռնարկ մը եւ եթէ կայանար իսկ, կրնար նոյնիսկ արհեստագործական տեղի տալ: Բայց Ապրիլ 22, 2006ին կայացաւ այսպիսի ձեռնարկ մը ու բազմաթիւ դասատուներու կողքին ունեցաւ նաեւ աղմկարար մը: Կը նշանակէ թէ բաւական ճամբայ կտրած ենք: Ինչպէս մեր երէցները մեզի կ'ըսէին «ինչքան ապրիլը այնքան շատ բան կը տեսնէք»: Ապրեցանք ու տեսանք: Մեր պատանեկան օրերուն թուրքին հանդէպ արտօնուած էր ունենալ միայն ստեղծարար գագայմունքներ: Ապրեցանք ու սորվեցանք դնահատել մարդկային արժանիքներ, անկախաբար թէ ի՞նչ ազգութեան կը պատկանի այդ արժանիքները ունեցողը, նոյնիսկ եթէ թուրք է:

### ՊԱՏԿԵՐ Բ.

Նոյն հանդիսութենէն մէկ այլ պատկեր մը: Կազմակերպիչներէն մին հրաւէր կ'ուղղէ քոյր հայկական կազմակերպութեանց մամուլին, ներկայ գտնուելու մամուլի սառլիսի մը: Այդ կազմակերպութիւններէն մին կը մերժէ, պատճառաբանելով թէ «մենք անոնց քով չենք երթար»: Թուրքը հեռուոր Պոլսէն Լոս Անճելէս գալով, կ'ընդառաջէ հայկական կազմակերպութեան մը յարկէն ներս մտնել, իսկ տեղուց հայկական կազմակերպութիւն մը չուզեր քոյր կազմակերպութեան մը յարկէն ներս մտնել: Եւ այս, մեր նահատակներուն ձօնուած ձեռնարկի մը առթիւ:

Լսած ու կարդացած ենք, թէ յիսնամեակ մը առաջ, ներհայկական թունալից մթնոլորտին մէջ, կային այսպիսի խղճալի ու աչքանելի մտայնութիւն ունեցողներ եւ արդարացողներ: Բայց այսօր: Ապրեցանք ու այս ալ տեսանք:

### ՊԱՏԿԵՐ Գ.

Ապրիլ 24, 2006: Մոնթեպելլոյի Եղեռնի յուշարձանին առջեւ: Եկեղեցական, մշակութային, բարեսիրական, քաղաքական եւ այլ կազմակերպութիւններ ու անհատներ եկած են իրենց յարգանքի տուրքը մատուցելու Եղեռնի գոհեբու յիշատակին: Հոն է նաեւ վերեւ նշուած թուրք բանախօսը: Յիշատակի նկարներ կը վերցուին: Յուշարձանի ճիշդ կեդրոնին զետեղուած է Մեսրոպեան վարժարանի ծաղկեպսակը: Անհատ մը այդ ծաղկեպսակին վրայ կ'ամրացնէ «ՀՅԴ» տառերով կազմուած ծաղկեպսակ մը, բոլորովին ծածկելով Մեսրոպեանին: Քաղաքավարի յուշող մը կ'ըլլայ, որ ճիշտ չէ եղածը: Մտիկ ընող չկայ:

Այս պատկերի գծով յաւելեալ մեկնաբանութիւն աւելորդ կը նկատենք:

Առաջին անգամ չէ, որ Ապրիլ ամսուն յուսախաբութիւններ կ'ապրինք, ականատես ըլլալով այս-

պիսի պատկերներու: Մինչեւ հիմա պէտք է վարժուած ըլլալինք ակնկալել, որ երբ տարուան 11 ամիսներու ընթացքին անկեղծ համագործակցութեան ոգին բացակայ է, ուրեմն աւելորդ է տարբեր արդիւնք սպասել Ապրիլ ամսուն: Իսկ եթէ ժողովուրդի աչքին փոշի ցանելու համար ձեւակախուէն պիտի քով քովի գանք, թող այդ ձեւակախութիւնն ալ պակաս ըլլայ: Որովհետեւ տիտուր իրականութիւնը տեսնելը աւելի շինիչ է, քան խաբուսիկ երեւոյթը: Առաջինի պարագային կարելի է դարձաններ որոնել, մինչ երկրորդի պարագային ամէն ինչ խաբկանք է:

Բայց դժբախտաբար տարուէ տարի այդ նոյն խաբուսիկ երեւոյթն է որ կը կրկնուի: Որովհետեւ մարդիկ աւելի հետաքրքրուած են մարդիկ աւելի հետաքրքրուած են քայլին զարգացումներով: Եւ պատճառը մեր առաջնահերթութեանց յստակացման պակասն է: Հատուածական նեղմիտ մտածողութիւնը ազգային առողջ մտածողութեանէն վեր դասելու մոլեգին մարմաջն է:

Եթէ ազգայինը ըլլար առաջնահերթ, մէկզմէկու ծաղկեպսակները չէինք ծածկեր, գիրար շուքի մէջ չէինք թողուր, այլ կողք-կողքի կը կանգնէինք ու կը քալէինք արեւի տարածուն շողերուն տակ:

Եթէ ազգայինը ըլլար առաջնահերթ, աղմկարարութեամբ չէինք փորձեր գզգացուց պահ մը յառաջացնել իւրաքանչիւր եւ հիանալի երեկոյի ընթացքին, ուր թուրք մտաւորական մը եւ ամերիկացի պետական ներկայացուցիչ մը որպէս գլխաւոր բանախօսներ, իրենց զօրակցութիւնը կը յայտնէին հայ դատին, խօսքով թէ գործով: Ամենքս ալ ներկայ գտնուած ենք հանդիսութիւններու, ուր արտայայտուած մտքեր կամ ներկայացումներ խորթ թուացած են մեզի: Բայց մեզմէ քանին՞ը ինքզինքնուն իրաւունք տուած են պոռչտուք բարձրացնել:

Եթէ ազգայինը ըլլար առաջնահերթ, բոլորս պիտի վարուէինք այն կարգ մը ազգայիններու նման, որոնք հանդիսութեան վերջաւորութեան մօտեցան մեզի, զնահատեցին Պոլսահայ Միութեան Մշակութային Մարմնի եւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան այս հոյակապ նախաձեռնութիւնը՝ հրաւիրելու թուրք յանդուգն մտաւորական Ռակըբ Զարաքօլուն եւ հարց տուին. «Ինչպէ՞ս կրնանք օգտակար հանդիսանալ»:

Որպէս պատասխան, սրտի անհուն գոհունակութեամբ կը յայտարարենք որ արդէն իսկ կազմուած է Պրն. Զարաքօլուի «Պիլի» հրատարակչատան բարեկամներու ֆոնտ մը, որ օգտակար պիտի հանդիսանայ յառաջիկայ հրատարակութեանց լոյս ընծայման: Եւ արդէն իսկ գոյացած է յաջորդ գրքի հրատարակման ծախսերը: Մեզի համար առաջնահերթութիւնը այս ֆոնտին ընդմէջէն Պրն. Զարաքօլուի ընդունուած զօրակցութիւնն է, առանց չուրդի կամ աղմուկի: Անոնք որոնք կը փափաքին նպաստել այդ ֆոնտին, առայժմ այդ կրնան ընել Նոր Սերունդ Մշակութային Միութեան միջոցաւ.

440 West Colorado #201  
Glendale, CA 91204

# ԱՊՐԵԼՈՒ ՄԵՐ ՏՕՆԸ

## ԱՐՄՔՆ ՏՍՏՈՒՐ

Ամէն գարնան երբ կը զարդարուի բնութիւնը գեղատեսիլ ծաղիկներով, թուփ ու ծառ կը հագնին իրենց կարմիր-կանաչը, կուգայ Ապրիլ 24-ը:

Որ է խորապէս՝ վիրաւորելու մեր տօնը:

Գիտենք որքան արիւն-արցունք, սուգ ու վիշտ տուաւ մեզի թուրքն այդ սեւ ու կարմիր օրը:

Օր չէր ատիկա: Արեւը՝ մարդկային խիղճին հետ խաւարեր էր ու մոլթը պատեր՝ աշխարհ, քաղաքակրթութիւնը իջեր անասնական, նախամարդկային աստիճանի:

Այո, գիտենք ի՞նչ էր Ապրիլ 24-ը: Ոչ սուգի, ոչ արցունքի, ոչ իսկ խունկի հարկ ունինք այլեւս:

Որեւէ կերպով այդ օրը մոռնալու անտեսելու հրաւէր մը չէ ասիկա, բնաւ:

Ու երբեք Ապրիլ 24-ը օրացուցի թերթիկի մը վերածելու տիտուր փորձ մը:

Թէեւ այդ ոգիով յիշուի Ապրիլ 24-ը արտերկրի մէջ:

Կ'ըլլան կաղապարային գրեթէ նոյն իմաստ խօսքերը կը գրուին մաշած նոյնիմաստ մաղթանքները: Իսկ խօսքը, վերջիշուամն ու մաղթանքը կը մնան լոկ մաղթանք:

Ամէն տարի բան մը կը պակսի Ապրիլ 24-ի ուժէն ու սուգէն:

Շատեր այդ օր կը լսեն ճառերը, միւս օրերուն կը մոռնան Ապրիլ 24-ը:

Այսպէ՞ս, արդեօք՝ մահացողներուն յիշատակը:

Ժամանակն է որ Ապրիլ 24-ը չիշենք ամէն օր, ամէն ժամ ու մղէ մեզ ճիգի, կեանքի:

Ահա թէ ի՞նչ կը պատգամէ Ապրիլ 24-ը:

Հայ ժողովուրդին պատմական եւ անժխտելի իրաւունքներուն հպտապնդումը եւ հուսկ վերադարձը բռնազրաւուած մեր հողերուն:

Այս ձեւով միայն կարելի պիտի ըլլայ ապահովել ֆիզիքական գոյութիւնը հայութեան մնացորդացին:

Յոյժ կենսական է ստեղծել ամուր, անասան, գոյատեւելու մեր կամքը հաստատող օրէնքը մը՝ «Դաշնագիր»ի կազմով:

Յարատեւ աշխատանքի դաշինք մը համագային համերաշխութեան ուխտ:

Կազմակերպուած, ծրագրուած կերպով կեանք տանք հայ դատին:

Ապրիլ 24-ը մղելու է մեզ ձեռք ձգենք այս աղուոր կենսական պայմանները, ուխտը, որպէսզի կաթիլ մը արիւն եւ պոռ մը արցունք վատնած չըլլանք եւ ունենանք, վարդանանցի օրինակով՝ Ապրիլ 24-ը մը:

Երգահանդէսով: Խորթ երեւոյթներ:

### ՊԱՏԿԵՐ ՎԵՐՉԻՆ


Ապրիլ 24, 2006, Հովիվուտ, հայ ուսանողներու-երիտասարդներու կազմակերպած ծովածաւալ ցուցահաւաք: Ելույթ կ'ունենայ Պրն. Զարաքօլու, հայերէնով յայտարարելով «ձեր ցաւը իմ ցաւն է, իմ ցաւը ձեր ցաւն է»: Ելույթի աւարտին սրտագին ողբուրդներ: Արցունք կայ մարդոց աչքերուն մէջ: Մարդկային անկաշկանդ ու ջիւղ գզգացումներու այս ինչ ալեկոծում, որ քեզ կը հարատացանէ ցաւը բաժնողին հետ, նոյնիսկ եթէ ան թուրք մըն է: Ու քեզ կը յուսադրի...

**«ՆՈՎՆԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ»**

Նարեկի բարեգամ, յուսարկիկ է նամուկան կիւրտիւնարիկ Արմէն Մարտիրոսի «ՆՈՎՆԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ» լիամբարտ վավերագրական կինոնկարի փետաբոլետայն (DVD) (սրբոյտան) ԿՅՐՈ ՃՅԳՅՈՒՆ, Խալանդարիկ «ՆՍՄԻՆԱՊՈՍԿԵՐ» Գրական-Մշակութային կեդրոն, «ՆՍԾ» վավերագրական ֆիլմերի կիւրտիւնարիկ:

Արմէն Ը՝ 520 (2 փետաբոլետայն տեսարան դաւաճում՝ 594):

Ապրիլյան ոգեկոչման այս օրերին եղեռնուցան, բանապիլի սրբոյնագրական ողբ գրքեռնուրդայն նվիրված միակ լիամբարտ վավերագրական այս փետաբոլետայն բալետայն նվիրվ կարող է լինել նարեկուտը Ձեր բարեկամներին:



Տեսակալատակը կարող եք ձեռք բերել միայն «ՆՍՄԻՆԱՊՈՍԿԵՐ» կեդրոնի խմբագրագրանք: Կասկե՛ն՝ 400 S. Glendale Ave. # N

Մանրամասն փնդելուրդներ կ'ապրանք խնդրում ենք գտնուողներին՝

**(818) 240-0600:**

Շնորհակալութեամբ «ՆՍՄԻՆԱՊՈՍԿԵՐ»



## Armenians Worldwide Commemorates 91-st Anniversary of the Genocide

Hundreds of thousands of Armenians from Armenia proper and its vast Diaspora silently marched to the hilltop memorial at Tsitsernakabert in Yerevan and laid flowers by its eternal fire in an annual remembrance of 1.5 million victims of the first genocide of the 20th century. Some of them carried Armenian flags and banners denouncing Turkey's long-standing denial that the massacres occurred.



Thousands silently march to the Genocide memorial at Tsitsernakabert

The nationwide minute of silence was observed at 7 p.m. local time.

The day-long procession began, as usual, with a prayer service in memory of the dead that was led by the head of the Armenian Apostolic Church, Catholicos Karegin II in the presence of Government officials.

The heads of foreign diplomatic missions in Yerevan were the next to lay wreaths at twelve bending columns that encircle the eternal fire at the memorial. Among them was U.S. Ambassador to Armenia John Evans, the first American official since President Ronald Reagan to publicly refer to the 1915-1918 massacres as genocide. "The Armenian Genocide was the first genocide of the 20th

Europe, the Stalin regime that killed millions of people in GULAG.

French ambassador to Armenia, Henry Cuny said France has said it word by officially recognizing the Armenian genocide. He said now it is important to remember those tragic events every year and push other nations to acknowledge the Armenian genocide.

Genocide commemorating events were held in all countries which have Armenian communities. Armenians in the Russian capital Moscow paid homage to Genocide victims by laying wreaths to a cross-stone near the Armenian Church of Resurrection and a liturgy was served in the church. In the afternoon Armenians protested outside the Turkish embassy in

## President Bush Issues Statement on April 24th Once Again Fails to Use the Word Genocide

On April 24th President George W. Bush has issued a special Presidential Message on the occasion of the 91st anniversary of the Armenian Genocide calling it one of the horrible tragedies of the 20th century.

The president once again failed to use the word Genocide, "the mass killings and forced exile of as many as 1.5 million Armenians in the final days of the Ottoman Empire in 1915. This was a tragedy for all humanity and one that we and the world must never forget." Read the Presidential message.

Last week over 200 US house and senate members called on President Bush to acknowledge the Genocide. The congressional letters were initiated by Senators John Ensign (R-NV) and Richard Durbin (D-IL) and Congressional Caucus on Armenian Issues Caucus Co-Chairs Joe Knollenberg (R-MI) and Frank Pallone, Jr. (D-NJ) respectively.

"As a world leader, it is important that the United States reaffirm the incon-



testable facts of history witnessed and reported by U.S. Ambassador Henry Morgenthau and acknowledged by others including President Ronald Reagan," said Ensign and Durbin. "Denial of the Armenian Genocide diminishes the value we place on human life and the principles of liberty on which this country is founded."

Following is the text of the message by President Bush:

### Presidential Message

April 24, 2006

Today, we remember one of the horrible tragedies of the 20th century — the mass killings and forced exile of as many as 1.5 million Armenians in the final days of the Ottoman Empire in 1915. This was a tragedy for all humanity and one that we and the world must never forget.

We mourn this terrible chapter of history and recognize that it remains a source of pain for people in Armenia and for all those who believe in freedom, tolerance, and the dignity and value of every human life. It is a credit to the human spirit and generations of Armenians who live in Armenia, America, and around the globe that they have overcome this suffering and proudly preserved their centuries-old culture, traditions, and religion.

We praise the individuals in Armenia and Turkey who have sought to examine

Continued on page 2



Lebanese Armenians marching in Beirut

century," he declared in a February 2005 speech in California.

The U.S. government, which has so far avoided officially recognizing the genocide for fear of antagonizing Turkey, disavowed Evans's remarks, saying that they reflected only his personal opinion. The State Department reportedly plans to recall the envoy, a move which would enrage the influential Armenian community in the United States.

Ukrainian ambassador to Armenia, Alexander Bozhko, said the humanity must learn a lesson from the history, saying the Armenian genocide was followed by the Holocaust and death camps across

Moscow demanding that it recognizes this crime.

In France, Armenian parliament chairman Arthur Baghdasarian unveiled a memorial to the Genocide victims in the Marseille. Another monument honoring the victims of the 1915 genocide was also opened in Lyon.

On Saturday 22 April, around a thousand Armenians living in the UK marched from Marble Arch to the Cenotaph in Westminster where a wreath was laid to draw attention to their demands for the recognition of the Turkish geno-

Continued on page 3

## Prime Minister Stephen Harper Affirms Canada's Position on Armenian Genocide Former Czech President Vaclav Havel Equates Mass Killings of Armenians and Jews Calling Both "Holocaust"

Turkey's Foreign Ministry said Tuesday that a reference by Canada's Prime Minister Stephen Harper to the "Armenian genocide" as fact had hurt bilateral relations.

"We are appalled by the prime minister's comments, which give support to Armenia's unfounded allegations of genocide," the ministry said in a statement. The statement said Harper's reference to the "Armenian allegations" as fact was serious, and that his position on the issue would "negatively affect ties between Turkey and Canada".

The Canadian head of government had on Friday praised commemorations of the massacres in Armenia during World War I. He noted that the Canadian Senate had passed a resolution in 2002 recognizing the killings in Armenia as the first genocide of the 20th century, and the House of Commons had followed suit two years later.

"My party and I have applied those resolutions and continue to do so," the

prime minister said in a statement.

The Turkish foreign ministry said the two resolutions had led to the "stagnation" of bilateral relations. The statement also recalled that a Turkish military attache had been killed by an Armenian militant group in Ottawa in 1982. The Turkish newspaper Hurriyet on Tuesday quoted a diplomat as saying the prime minister's comments had led to Canadian companies being excluded from a forthcoming bid to build Turkey's first nuclear plant.

Meanwhile, former Czech President Vaclav Havel on Tuesday equated the mass killings of Armenians by Turks 90 years ago to the slaughter of Jews in World War II, calling both "holocausts." Havel made his comments at a conference of education ministers in Prague, in which he told participants that modern civilization's loss of a moral code should be blamed for mass slaughters.

Statement by Prime Minister of Canada on page 2

Continued on page 2

## Gov. Schwarzenegger Proclaims Days of Remembrance of the Armenian Genocide

Governor Arnold Schwarzenegger has proclaimed the week of April 23<sup>rd</sup> through April 29<sup>th</sup> as Days of Remembrance of the Armenian Genocide. In recognizing the Genocide, he urges all freedom-loving people in America and around the world to do the same.

The Governor's Proclamation is attached below.

April 24, 1915, marked the beginning of the Armenian Genocide - a crime against humanity that led to the death of 1.5 million Armenians between 1915 and 1923. The 500,000 Armenians who survived the horrors of this extermination by the Ottoman Empire were expelled from their homes and forced to settle in various countries throughout the world.

Stripped of their possessions, these refugees carried with them little more than the memories of loved ones, a hope for a better life and the courage to start anew. Armed with this determination, they flourished in many of their adopted homelands, including California - home to the largest Armenian population outside of the Republic of Armenia.

Today, these Armenian survivors and their descendants continue to provide tremendous leadership and invaluable contributions to our state's businesses, art community, and academic, governmental and cultural institutions. Their spirit of hard work and perseverance, coupled with their dedication to tradition, is a great example to all Californians and adds to the luster of our Golden State.

As we commemorate the ninety-first anniversary of the Armenian Genocide, we must study and learn history's lessons, fight to end bigotry and hate in all their forms and live lives of tolerance towards all people. Silence only serves to perpetuate the denial of the past, while open acknowledgement lays the foundation for a more hopeful tomorrow. In that spirit of hope, I stand alongside our friends in the Armenian community in recognizing the Armenian Genocide, and urge all freedom-loving people in America and around the world to do the same.

NOW, THEREFORE, I, ARNOLD SCHWARZENEGGER, Governor of the State of California, do hereby proclaim the week of April 23<sup>rd</sup> through April 29<sup>th</sup>, 2006, as "Days of Remembrance of the Armenian Genocide."

IN WITNESS WHEREOF I have here unto set my hand and caused the Great Seal of the State of California to be affixed this the nineteenth day of April 2006.

Arnold Schwarzenegger  
Governor of California



## County Mayor Antonovich Recognizes "Day of Remembrance for the Armenian Genocide"



ACA representatives Simone' Darakjian and Razmik Der-Tavitian receiving the proclamation from Michael Antonovich

At the Board of Supervisors meeting on April 18, 2006, Los Angeles County Mayor Michael D. Antonovich presented a scroll to members of the Armenian community in recognition of the passage of his motion proclaiming April 24, 2006 as "Day of Remembrance for the Armenian Genocide of 1915-1923" throughout Los Angeles County.

"Los Angeles County is home to the largest population of Armenians in the United States, and they have enriched our County through their leadership in the fields of business, agriculture, academia, medicine, government and the arts," said Mayor Antonovich.

On April 24, 1915, the Turkish government began the systematic extermination of the Armenian community. Religious, political and intellectual Armenian leaders were among the 1.5 million victims who were arrested and murdered.

Due to this horrible tragedy, the Armenian community is committed to ensuring that those who have died due to human rights atrocities are never forgotten. By consistently remembering and openly condemning the atrocities committed against the Armenians, Los Angeles County demonstrates its sensitivity to the need for constant vigilance to prevent similar events in the future

## Statement From Prime Minister of Canada on Day of Commemoration of Armenian Genocide

MONTREAL -- The Congress of Canadian Armenians, on behalf of all of its member organizations and the Armenian community, proudly thanks the Prime Minister of Canada, the Right Honourable Stephen Harper, for issuing a strong statement recognizing the Armenian genocide. The statement marks the first time that a Canadian Prime Minister has publicly recognized the Armenian genocide while in office, and is in keeping with Mr. Harper's high moral values and his record on human rights.

The Diocese Office of the Armenian Apostolic Church in Montreal was actively involved in writing part of the wording of the statement for Mr. Harper. The Prime Minister signed and sent the statement to several Armenian organizations across Canada prior to the 91st anniversary of the Armenian genocide



which is being commemorated today.

The Congress of Canadian Armenians serves as a united voice to present Armenian issues to the Canadian public, carries out projects to preserve and strengthen Armenian life in a multicultural Canada, and provides a forum where member organizations can coordinate their activities.

### Statement by Prime Minister of Canada

I would like to extend my sincere greetings to all those marking this somber anniversary of the Medz Yeghern.

Ninety-one years ago the Armenian people experienced terrible suffering and loss of life. In recent years the Senate of Canada adopted a motion acknowledging this period as "the first genocide of the twentieth century," while the House of Commons adopted a motion that "acknowledges the Armenian genocide of 1915 and condemns this act as a crime against humanity." My party and I supported those resolutions and continue to recognize them today.

We must never forget the lessons of history, nor should we allow the enmities of history to divide us. The freedom, democracy, and human rights enjoyed by all Canadians are rooted in our mutual respect for one another.

I join with you today in remembering the past and I encourage you to continue honouring your forefathers by building a bright future for all Canadians.

Sincerely,  
The Right Honourable Stephen Harper, P.C., M.P.  
Prime Minister of Canada

## Presidential Message

Continued from page 1

the historical events of this time with honesty and sensitivity. The analysis by the International Center for Transitional Justice, while not the final word, has made a significant contribution toward deepening our understanding of these events. We encourage dialogues, including through joint commissions, that strive for a shared understanding of these tragic events and move Armenia and Turkey towards normalized relations.

Today, we look with hope to a bright future for Armenia. Armenia's Millennium Challenge Compact reflects our confidence and the importance we place in Armenia making progress on democratic reform and advancement of free markets. We seek to help Armenia bolster its security and deepen its inclusion in the Euro-Atlantic family. We remain committed to securing a peaceful and lasting settlement of the Nagorno-Karabakh conflict and hope the leaders of Armenia and Azerbaijan will take bold steps to achieve this goal.

On this solemn day of remembrance, Laura and I express our deepest condolences to the Armenian people. Our nations stand together, determined to create a future of peace, prosperity, and freedom for the citizens of our countries and the world.

GEORGE W. BUSH

## Harper Affirms Canadas Position on Armenian Genocide

Continued from page 1

"In such a situation, a holocaust, be it the holocaust of Armenians or Jews, ... these big catastrophes in fact are monstrous but in a way understandable products of this ... civilization," he said.

Havel told the Council of Europe conference that holocausts "are not a problem of individual nations but of the whole of mankind, of modern civilization. It's a shame of this civilization."

"It is like if this world ... had a weakened conscience, because conscience is something less rational, less describable

by means of modern science," Havel said. "Affirm and universal moral code which everybody can understand is trailing away."

Havel, a renowned writer and playwright, led Czechoslovakia from 1989 until its split in 1993, and then served as president of the Czech Republic until 2003.

The two-day conference - "Teaching remembrance: Cultural Heritage - Yesterday, Today and Tomorrow" - brought participants to the former Jewish ghetto in Theresienstadt on its first day Monday.

## Open Letter to Dr. Prof. Cengiz Utas President of Ercyes University, Kayseri, Turkey

With great interest I read the news about the organization of a conference hosted by your university on: "The Art of Living Together in the Ottoman Society, The Case of Turkish Armenian Relation". You foresee the participation of 123 scholars from different countries of the world. The symposium aims to work out a new start in Turkish Armenian relations based on the Ottoman model, authentic facts and documents.

Sincerely I immediately thought about the sentiments and reaction of the thirty million Kurds living today in the Republic of Turkey. Doubtless they will be surprised or rather shocked after reading the title of the conference and discussing the goals aimed at... For centuries they have lived under Turkish yoke but have not yet received the status of a nation or ethnic community. They have been ignored of national belonging, the right to be named Kurds or to speak Kurdish. They don't have their literature and schools. It has been forbidden to them to listen to Kurdish broadcasts aired from neighboring countries.

Այդ ընդարձակ դաշտագետնին մէջ, գանազան խումբերու բաժնուած, մենք ֆութպոլ կը խաղայինք: Բայց ինչ ֆութպոլ, ոչ կօշիկ կար, ոչ գնդակ, ֆութպոլին անունը կար միայն: Գնդակի տեղ իրարու մէջ թխմուած ու կլոր կարուած լաթէ գունդ մը, իսկ կօշիկը հարուստներու յատուկ հագուազիւտ պերճանք մըն էր այդ օրերուն: Հարուստ արդէն չկար, բայց, կային ի հարկէ «քանի մը դրուշի տէր» մարդիկ, կամ մակարդակ պահելու գողներ, որոնք իրենց գաւակներուն կօշիկ կը հագնէին: Որպէս ուսուցչի գաւակ՝ անոնցմէ մէկն ալ ես էի: Բայց կօշիկը ոտքս կը մնար մինչեւ դաշտ հասնիլս, ուր բոպիկ ընկերներու մէջ իբրեւ բացառութիւն ծաղրի առարկայ ալ կ'ըլլայի, եւ հաւատացէք որ ստորակայութեան բարդոյթ զգալով ես ալ կը բոպիկնայի: Ժամերով խաղալն ու յոգնելն յետոյ, տուն կը վերադառնայի աղտոտած եւ յաճախ արիւնոտած ոտքերով, մօրս կողմէ ալ յանդիմանութեան ու ծեծի ենթարկուելով: Բայց այս բոլորը չէին օգնել որ ընթացքս փոխէի, եւ յաջորդ անգամ կ'ընէի նոյնը՝ ծաղրէ փուսափելով ընդհանուրին պէս ըլլալու համար:

Աղքատ եւ աղտոտ էր գաղթական հայ ժողովուրդը: Հայ կիներուն աւանդական մաքրասիրութիւնը իրենց տուններուն սահմանէն անդին չէր անցներ: Զուրի բաժանման խողովակներ չկային տուներէ ներս: Խմելիք ջուրը մաքուր աղբիւրներէ ապահովելով, լուացքի եւ այլ պէտքերուն ջուրը Նահրի գետակէն կ'ապահովուէր: Տուները, աւելի ճիշդ է ըսել խրճիթները, լուացարան եւ արտաքնոց չունէին: Դաշտին հեռաւոր մէկ անկիւնը, մանաւանդ գետակին եզերեայ մասը, գիշերները ընդհանրապէս, հասարակաց արտաքնոցի կը վերած-

ուէին: Յարմարութիւն ունեցողները քարիւղի թիթեղի մը յատակը ծորակ մը հաստատելով, գայն վերի յարկի պատշգամին անկիւնը դրած՝ իբրեւ լուացարան կը գործածէին, իրենց թափած օճառ ջուրով յաճախ վարի անցորդներն ալ լողցնելով:

Այս ժամանակներուն, այս կացութեան մէջ է որ հիմնուէր է Լիբանանի առաջին հայ դպրոցը՝ Նուպարեան վարժարանը, որուն հիմնումի մանրամասնութիւններուն մասին գրեր էի նախապէս:

Բայց հակառակ մեր աղքատութեան, երջանիկ ու ինքնավստահ էինք մենք: Մենք՝ հոն ծնած մանուկներս, նոյնիսկ տէր տիրականի հոգեբանութիւն ունէինք, առանց գաղթականի բարդոյթի: Տարբերելով մեր ծնողներէն՝ այդ դաշտին ու վտակին տիրակալներն էինք մենք:

Այդ օրերուն էր, երբ հագիւ 5-6 տարեկան անզուսպ լած մըն էի ես, դաշտին մէջ խրճիթներէն հեռու, փաթթոցաւոր մարդ մը ծունկի չոքած եւ ատենը մէջ մը գետինը համբուրելով կ'աղօթէր: Մեր ծնողներէն լսել էինք որ այդպէս նամազ կ'ընէին թուրքերը...: Ուրեմն, թուրք էր այն մարդը, վճիռը տրուած էր: Եւ հայտէ՛, խումբ մը լաճեր սկսանք քարկոծել գայն: Հակառակ տեղացող քարերուն, մարդը առանց ընդմիջումի աղօթքը վերջացնելէ յետոյ, գաւազանը ճօճելով սկսաւ մեր ետեւէն վազել: Իսկ մենք գաղթականին նեղ ու ցեխոտ գոլիհները մտնելով ապաստանեցանք մեր տունները:

Այդ օրերէն ի վեր անցեր է եօթանասունամեակ մը, բայց զդուռը դեռ կը կոտտայ հոգիիս խորը: Ի՞նչ էր այդ խեղճ, հաւատացեալ մահմետականին յանցանքը, որուն համար մենք՝ նոյնպէս անմեղ երախաներ քարկոծեցինք զինք:

Ան ալ մեզի պէս ցեղասպան թուրքին անուղղակի գոհերէն մէկն էր, որմէ ես ներողութիւն պիտի ուզէի ինդրել յապաղած կերպով, հոգ չէ թէ թուրքը տակաւին կը յամառի ներողութիւն չխնդրել մեզմէ:

#### ԽՂՃԻ ԽԱՅԹԸ

Այդ տարիներուն ձտէյտէն Պէյրութի հեռաւոր մէկ արուարձանն էր: Ժայռոտ ու բարձրադիր՝ սնուպարի (չոճի) պուրակներով զարդարուած շրջան մըն էր, ուր գաղթական հայ ժողովուրդին մէկ կոտորակը հանգրուանէր էր, մեծ մասամբ հողագործութեամբ զբաղելով: Եւ ուր որ հայ համայնք՝ հոն հայկական դպրոց աւանդութեան հետեւելով, հայրս Բարեգործականի կողմէ հոն ուղարկուէր էր դպրոց մը հիմնելու համար: Հոն կար արդէն վարդապետեան ընտանիքին կաւազործարանը, ուր բաւական մեծ թիւով հայ գործաւորներ թրծուած կաւէ ջնարակուած ամաններ ու կաթաններ կ'արտադրէին:

Փոքրիկ լած մըն էի, հագիւ 7-8 տարեկան, դպրոցական ժամերէն յետոյ եւ Շաբաթ ու Կիրակի օրերը, ընկերներով անտառները տակն ու վրայ կ'ընէինք՝ ալոճ, մոռ ու վայրի տանձ հաւաքելով: Մեր սիրելի զբաղումներէն մէկն ալ բալուտի (վայրի կաղին) ճիւղերով ածուխ շինելն էր:

Այսպիսի պտոյտներուն ընթացքին տեսանք գէյնօ կին մը, մինչեւ գլուխը սեւ լաշակներով պարուրուած, առուակի մը եզերքը

### ՀԱՅ ԱՐԿԱՍԿՆԵՐԻՆ... ՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Անզուսպ բողոքով, անհուն մարմաջով  
Աշխարհն ենթալցրել արդար պահանջով,  
Այժմ կրկնում ենք, որ պայքար մղուի  
Վասն հայ քաղաքի թափուած արիւնի...  
Դուք անմար լոյսի ջահեր վառեցիք,  
Լուսածիր ցամաքի յար դէպի առաջ...  
Ահա հերոսներ ելած անվեհեր  
Յարգանքով կանգնել ձեր ոգու առաջ...  
Ձեր խաղաղ ոգու, սրտի ծալկերով,  
Թող ծաղկեն հազարերանգ ծաղիկներ,  
Սրբացած շիրմին ձեր տառապակոծ  
Թող ծիծանուեն լոյսի կամարներ...

Ահա եկել ենք, աղօթքի կանգնել,  
Ընծայ ենք բերել ձեզ վարդաշուշաններ,  
Լոյսեր կը վառենք պայքարիդ ցամաքին,  
Կեանքներ կը գոհենք ձեր յուշարձանին...  
Նահատակների թափուած արիւնը  
Դարձաւ սուրբ դրօշ յանուն պայքարի...  
Մենք պիտի փրկենք մեր կամով արի  
Թշնամու ձեռքից հողը Նայիրի...  
Դուք ցահատակներ, անմահ ոգիներ,  
Հանգիստ անջեցէք  
աւագուտներում,  
Մենք պայքարում ենք ոգի իրից,  
Որ դատաստանի ժամը շուտ հասնի...

ծոթրին (գա'թէր) եւ փիրփիր (քէ-օմէճ) կը հաւաքէր: Չեմ գիտեր ինչու գէյնօ կը կոչուէին երեսը կապտաւուն նախշերով ցտուած այդ գնչու կիները, որոնք իրենց բերքը շալկած՝ հայկական թաղերը կը պտտէին իրենց հունձքը ծախելու համար: Հանգիստ աշխատելու համար կինը իր մէկուկէս-երկու տարեկան երեխան առուակին եզերքը նստեցուցած էր:

Այդ տարիներուն դեռ շատ թարմ էր թուրքին պատճառած ցաւը հայ ժողովուրդին: Հօրս բարեկամները իրենց պարտէզներուն բերքէն լոլիկ, վարունգ, սոխ եւ պղպեղ բերելով օղիի սեղանի մը շուրջ, յաճախ կը խօսէին թրքական գուրումին ու ջարդերու մասին, տարագրութեան ճամբաներուն վրայ իրենց կրած տառապանքին մասին, կարօտով ու կսկիծով յիշելով իրենց ծննդավայրերուն մէջ անցուցած երանելի կեանքը: Մենք՝ Լիբանան ծնած երախաներս, թուրք կոչուած արարածը չէինք ճանչնար, չէինք տեսած,

բայց պատմուածներուն համաձայն՝ մեր երեւակայութեան մէջ գէյնքն ու սուրը ձեռքին, փաթթոցաւոր, շալվարով ու լաշակով մարդիկ ու կիներ էին անոնք: Այս խեղճ կիներ սուր ու գէյնք չունէր անշուշտ, բաց մեր երեւակայած թուրք կիներուն պէս սեւ լաշակով պարուրուած էր մինչեւ գլուխն ու դէմքը, բայց պահելով միայն աչքն ու քիթը: Ուրեմն, թուրք ըլլալու էր: Եւ այդ ենթադրութիւնը բաւեց որ կիցով մը գետնին հաւասարեցնէինք այդ երեխան ու վրէժխնդրական գոհունակութեամբ խափչէինք:

Տխուր, ցաւատանջ եւ անջնջելի յիշողութիւն մըն է, որ պարբերաբար կը յաճախէ ինձի, մանաւանդ ապրիլեան այս օրերուն:


Թուրքին կատարած մեծ ոճիրին հանդէպ մէջս կուտակուած վրէժխնդրութեան սխալ ընտրուած գոհը եղաւ այդ երախան ալ, ինչպէս վերեւ յիշուած փաթթոցաւոր մարդը, անարդար կերպով անմեղ թիրախը հանդիսանալով թուրքին հանդէպ մեր ատելութեան:

**«ՆՈՐ ՄԵՐՈՒՆՊ»**  
**ԵՆՈՒՄՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ**

**ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑԸ**  
**CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ**  
**(ՎԼԵՆՏԵՅԼ, ՊՈՐՊԵՆՔ, ԼԱ ԲՐԵՍԵՆԹԱ)**

**ԴԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00**

**Jessica Demirdjian**  
Realtor®



**Prudential**

California Realty  
9878 Hibert Street  
San Diego, CA. 92131  
Bus 858 653-6400 Fax 858 653-6440  
Cell 619 846-7738 jessicad@prusd.com

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՆ

ԲԵՂՆԱԽՈՐ ԱՆՑԵԱԼ-ԼՈՒՍԱՇՈՂ ԱՊԱԳԱՅ

ՀԱՅ ԿՆՈՋ ԴԵՐՈ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ԵՒ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻ ՄԵՋ

ՄԵՐ ԱՆԾԱՆՕԹ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷՋՆԵՐԷՆ ՔԱՂԵՑ ԵՆՈՎՔ ՊԱԼԻԿԵԱՆ

ԵՆՈՎՔ ՊԱԼԻԿԵԱՆ

Իգական սեռը միշտ եւ ամէն տեղ իր կոչումով եւ բնատուր շնորհներով դարձած է ընտանիքի առանցքը, սիրոյ եւ անձնուիրութեան գերազանց զգացումներով իրարու կապած է ընտանիքի բոլոր անդամները:

Մարդկութեան եւ ազգերու հիմը ընտանիքն է դարձեալ, ուր մայրական հօր դերին ազդեցութեան տակ, կը կերտուի զաւակաց նկարագիրը, բարի կամ յոռի հակումներով:

Դիտուած է որ քաջարի ազգեր, իրենց հողին ու հայրենիքին պաշտպանութեան ատեն, աւելի եռանդով գոհած ու գոհուած են, իբրեւ արդիւնք իրենց հոգեկան ու բարոյական յատկութիւններուն, որոնք դասով չեն ուսուցուիր, այլ կը տալուրուին ու կը ներգործուին ընտանիքին մէջ, մայրական գորեղ նկարագրի օրինակէն:

Ակնարկ մը միայն, մեր ազգային անցեալ կեանքի վրայ, մեզի պիտի տայ փոթորկոտ եւ արիւնոտ շրջաններու դառն իրականութիւնը՝ իրերայաջորդ եւ սրտակեղծ դէպքերու եւ կոտորածներու, որոնք խորապէս ազդած են հայ անհատին տոկոսն նկարագրին վրայ:

Տառապանքի եւ վիշտի մէջ թրծուած հայ կնոջ կամքը չէ ընկրկած բնաւ, այլ նոր կորովով վերստին շինած ու շինցուցած է ընտանեկան բոյնը, տալով ազգին վարդանի պէս քաջեր, վեհօգի եկեղեցականներ, սուրբեր, եւ մեծատաղանդ մտաւորականներ:

Մեր պատմութիւնը կը վկայէ թէ, հայ կինն ու մայրը, իրենց գործունէութեան դաշտը առաւելապէս տունը ըրած են, իբրեւ հաւատարիմ պահպաններ ազգային աւանդութեանց, մայրենի լեզուին, հոգեկան ու բարոյական արժէքներու գորեղացման, սակայն ճգնաժամային օրերուն, անոնք լքելով իրենց հանգիստ կեանքը, լրիւ նեցուկ հանդիսացած են իրենց ամուսիններուն եւ այրերուն:

Աւելի յետոյ, կանացի ընկերակցութիւններ, կարեւոր դեր կատարած են կրօնական ու կրթական հաստատութիւններու շուրջ եւ իրենց անձնուէր գործունէութեամբ գնահատելի արդիւնք յառաջ բերած են:

Եւ այսօր, 21րդ դարու սկիզբը, որքան ուշագրաւ է տեսնել հայ կիններն ու մայրերը, իգական սեռի պատկանող երիտասարդներ, որոնք հերոսաբար նուիրուած են ազգային ծառայութեան:

Հ.Բ.Ը. Միութեան Տիկնանց վարչութիւնները, Հայ Կին միաւորը, զանազան վարչութիւններու մէջ գործող հերոսուհիներ, նուիրեալ եւ անփոխարինելի մասնակցութիւն ունին մեր Միութեան պայծառացման մէջ:

Հ.Բ.Ը. Միութեան առաջին կին նախագահը՝ 1989, Լուիզ Մանուկեան-Միմոն, մեր պատմութեան ամենէն զգայուն շրջանին իր նուիրուած ծառայութեամբ բացառիկ նիւթաբարոյական նպաստ բերաւ հայրենիքին ու եկեղեցիին, որոնք միակ հաստատուն ամրոցներն են

հայութեան եւ հայապահպանումին: Նմանապէս, ծրագիրներ իրականացուց արտերկրի զանազան գաղութներուն մէջ: Ան կը շարունակէ իր ազգաշէն ծառայութիւնը իբր Ատենապետ Հ.Բ.Ը. Միութեան վարչութեան:

Ասկէ մէկ դար առաջ, երբ Հ.Բ.Ը. Միութիւնը հիմնադրուեցաւ, հայ կնոջ սիրտին ու հոգիին խօսող միակ կազմակերպութիւնը հանդիսացաւ, անոր մէջ իր ծառայութեան լայն բաժինով, հարազատ արտայայտիչը եղաւ Գթութեան Ոգիին:

Հ.Բ.Ը. Միութեան Տիկնանց Պատուական Յանձնախումբը՝ պարարտ ու պատրաստ հողի պէս ընդունեց Բարեգործականի վեհ գաղափարականը եւ հոգեւին նուիրուեցաւ անոր, իր կոչումին ու դերին վայել յաջասիրութեամբ:

Միութեան լայն ու տարածուն գործունէութեան դաշտին մէջ Հայ կինը ազատ ու անկաշկանդ ասպարէզ իջաւ եւ նիւթական ու բարոյական մեծամեծ յաջողութիւններ արձանագրեց:

Քառասուն տարիներէ ի վեր ականջալուր եւ ականատես եղած եմ կանացի աչք սքանչելի գործունէութեան, որ սկսած է նախ որբախնամի ծրագրով եւ հետզհետէ ընդարձակուած է օրուան պահանջներուն համաձայն, հետեւեալ ծրագիրներով:

Ընկերային ծառայութիւն, հոն ուր որ կարիքը կար, կամ եթէ դեռ կայ:

Կաթի սնունդի բաշխում, Միջին Արեւելքի Հայ մանուկներուն:

Կարի գործ, եւ հանդերձեղէնի առաքում արտասահմանի կարօտեալներուն:

Կրթական դասախօսութիւններ, մտքի լուսաւորութեան ճամբով օգնել ազգապահպանումի կենսական գործին:

Գործն ու արդիւնքը մէջտեղն են, հայ հասարակութեան հիացումին ու յարգանքին արժանի: Գործն աւելի խօսուն է քան գովասանքը եւ վստահ եմ որ, ազնուական ցեղիս հոգիով ու սիրտով մեծ հայուհիներ չեն կրնար տունի սահմանափակ ու սեղմ միջավայրին մէջ գոհանալ, այլ ազգային նոր ոգիով ստորուած նորանոր յաջողութիւններ պիտի արձանագրեն:

Գաղափարը անջրպետ ու հեռաւորութիւն չի ճանչնար, նոյն գաղափարին շուրջ կրնան բոլոր ուղի ու գործել մղոններով հեռու եղող անձեր ու բազմութիւններ եւ դարձեալ կոչուի «Մի»ութիւն, oneness, որ իրական ոյժի եւ գործութեան աղբիւրն է:

Հայ կեանքի երէկին, Գոյութեան Ոգին էր մեր ներշնչող գաղափարը:

Այսօր Հայ Մշակութի Լոյսը կ'ոգեւորէ մեզ եւ մեր գործունէութեան սլաքը կը դարձնենք դէպի ազգապահպանութիւն, մշակութի ճամբով:

Վաղը, Հայրենասիրութեան Հուրը պիտի մնայ միշտ, իր բարձր կոչումին ու դերին տիրական առումով:

Ու Հայ կինը, իր հաւատքի, մտածողութեան եւ զգացողութեան

Հ.Բ.Ը. Միութեան օրհնաբեր ծնունդէն ի վեր, տարեդարձներ կը տօնուին ամենուրեք եւ անոր հիմնադրութիւնը կը պանծացուի բոլորին կողմէ ու այդ առթիւ բանախօսներ ու յօդուածագիրներ կ'ոգեկոչեն հիմնադիրներու, բարերարներու եւ առաջնորդներու յիշատակը: Մեր մեծ կազմակերպութեան բազմապիսի բարեսիրական, կրթական, մշակութային ու ազգասիրական գործունէութիւնները այսպիսի պատեհութիւններով անգամ մը եւս գնահատանքի եւ հիացումի կ'արժանանայ:

Քիչ անգամ, սակայն, կ'անդրադառնանք այն անդամներուն մասին, որոնք իրենց համեստ միջոցներով, բարի կամեցողութեամբ եւ անձնուէր ու հաւատարիմ ծառայութեամբ, անծանօթ գինուորներու նման կը պահեն ու կը պահպանեն Հ.Բ.Ը. Միութիւնը: Անոնցմէ շատեր, թէեւ յաւիտենականապէս բաժնուած են մեզմէ, սակայն անոնց բարի օրինակը ներշնչման աղբիւր է եւ յիշատակը կը մնայ իրենց պատկանած շրջանակներուն մէջ:

Ամերիկահայ գաղութներու մէջ, օրինակի համար, Միութեան ծնունդէն ի վեր, բազմաթիւ հաւատաւորներ տարիներով ծառայած են խղճմտօրէն վարչութիւններու մէջ, ստեղծակալութիւն, ատենադպրի, գանձապահի եւ այլ պատասխանատու պաշտօններով: Իսկ ուրիշներ խնայողութեամբ ապրելով եւ նոյնիսկ գրկանքի գնով, նուիրատուութիւններ կատարած են որպէսզի Հ.Բ.Ը. Միութեան հայապահպանման ջանքերը յաջողութիւն գտնեն:

Ունեցած ենք մտաւորականներ, որոնք թանկագին ժամեր գոհած են Բարոգործականի միջոցաւ գեղեցիկը, բարին, ազնիւը եւ ճշմարիտը տարածելու եւ պայքար մղած են անխոհեմ երեւոյթներու դէմ: Անոնք շունչ հատցուցած, գրիչ շարժած են ներշնչելու հոգիները եւ լուսաբանելու մտքերը, որպէսզի շատնայ թիւը բարերարներու, որպէսզի աւելի լայն կերպով մասնակցին ազգաշինութեան

գործին: Արդարեւ, այսպիսի գրչի ու մտքի տէր մեր բարեկամները որոշ դեր ունեցած են Հ.Բ.Ը. Միութեան հօրացման ու արժանի են ամենուս գնահատութեան ու երախտագիտութեան:

Այսպէս, շատեր Հ.Բ.Ը. Միութեան Եղբայրութեան ու Միւրոյ դրօշակը բարձր պահած են, որպէսզի հայն ալ ուրիշ ազգերու կարգին իրաւունքը ունենայ իր գլուխը վեր պահելու:

Երբ Ապրիլ ամսուան ընթացքին Մեծն Նուպար եւ իր գործակիցները կ'օրհնուին եւ բարերարներ կը յիշատակուին, արդար է որ յարգենք նաեւ յիշատակը անոնց ալ՝ որոնք համեստ ծառայութիւններ մատուցած են Միութեան ծաւալման համար:

Պատշաճ առիթներով թագաւորներ, նախագահներ եւ պետական դէմքեր ծաղկեպսակներ կը գետեղեն Անծանօթ Զինուորի շիրիմին վրայ: Յարգանքի այս ցուցցով, անոնք կ'ոգեկոչեն անծանօթ գինուորներու հերոսութիւնները ու գոհաբերութիւնները: Այս տարեդարձին առիթով, մենք ալ երախտագիտութեան անթառամ ծաղիկներով օրհնենք յիշատակը Հ.Բ.Ը. Միութեան Անծանօթ Զինուորներուն:

Այս ոգիով ներշնչուած, Հ.Բ.Ը. Միութեան Հարաւային Գալիֆորնիոյ Շրջանակային Յանձնաժողովը, Հայկական բոլոր եկեղեցիներուն մէջ, Հ.Բ.Ը. Միութեան ծանօթ եւ անծանօթ նուիրեալներուն (գինուորներուն) յիշատակը յարգելու համար, Կիրակի, 23 Ապրիլ 2006ին, հոգեհանգստեան պաշտօն եւ աղօթք ինդրեց:

Նոյն օրը, ի յարգանս մեզմէ յաւատ բաժնուած բազմահազար նուիրեալ ու հաւատաւոր անդամներուն կատարուեցաւ օծումը խաչքար Յուշարձանի մը՝ թեմիս Բարեջան Առաջնորդ Յովնան Արքեպս. Տէրտէրեանի, ինչպէս նաեւ Աւետարանական եւ կաթողիկէ եկեղեցապետներու կողմէ: Արարողութեան աւարտին ծաղկեպսակներ գետեղուեցան նորակառուց յուշարձանին առջեւ, Փաստիւնայի Ալեք Մանուկեան կեդրոնի շրջաբակին մէջ:

Բարձրագոյն հասկացողութեամբ օժտեալ հայ կինն է դարձեալ, որ Մշակութի Զահր ձեռքին, Հ.Բ.Ը. Միութեան դրօշին տակ պիտի հաւաքէ ամբողջ հայութիւնը եւ ճեղքերու բացած խրամատին ամրապինդ շաղախը պիտի ըլլայ անքակտելի եւ անբաժան:

Փառք ու պատիւ Հ.Բ.Ը. Միութեան հարիւրամեայ վաստակին:

ուժգին արտայայտութիւններով, պատնէշին վրայ պիտի մնայ միշտ, իր բարձր կոչումին ու դերին տիրական առումով:

Մայրական սէրը խտր չընդունիր իր գաւակաց միջեւ, որքան ալ անհասկացող ըլլան ու տարակարծիք: Ազգային վերակերտումի Սուրբ Գործին մէջ, հայ գիտակից մայրութիւնը պարտք մըն ալ ունի կատարելիք, Աստուծոյ օգնութեամբ եւ մաքուր խղճի առաջնորդու-

HARUT DER-TAVITIAN License #0B28270 1807 W. Glenoaks Blvd., Suite 202 Glendale, CA 91201 Tel.: 818/502-3233 Fax: 818/502-3244 Pgr.: 818/608-9898 info@excelhye.com www.excelhye.com EXCEL HYE INSURANCE SERVICES AUTO • HOME • LIFE • HEALTH • DISABILITY • COMMERCIAL



# »ROTARY INTERNATIONAL« »ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ« ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

## ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՂԻՆԱՆ

### ՄՈՒՏՔ

Չենք սխալի եթէ յայտնենք թէ մեր հայ համայնքը գրեթէ ամբողջութեամբ կլանուած է իր սեփական հոգսերով, հարցերով եւ նաաճեւունութիւններով, որ միայն պարբերաբար կը փորձէ «աչք մը նետել» իրմէ դուրս սեղի ունեցող եւ բազմատեսակ հանգամանք պարունակող երեւոյթներու մասին: Այս կացութիւնը, առ այժմ, հասկնալի է քանի որ մենք, հայերս, գէթ Գալիֆորնիայէն ներս՝ տակաւին ամուր հաստատուած հիմքեր չունինք, եւ մեր գաղութաշինութիւնը տակաւին իր լրումին չէ հասած: Թէ երբ կրնայ հասնիլ այդ լրումին, տակաւին յայտնի չէ, եւ թերեւս ալ երբեք չհասնի, քանի որ ազգային մեր գործունէութեան ընդհանուր շրջագիծէն ներս, մեր տարբեր-տարբեր նախաձեռնութիւններն ու իրագործումները տակաւին կարելի չէ աւարտած նկատել: Այս բոլորը պարզապէս յայտնելու համար որ հայ համայնքը, բացի պատահական փորձերէ այլ շրջանակներէն ներս մուտք գործելու, առաւելաբար կողմացած գոյավիճակ մը ունի, ինքնիրմով ապրող եւ դժբախտաբար նաեւ, ինքնիրմով գոհացած:

Ուրախալի է որ մեր մէջ կան շրջանակներ եւ անձնաւորութիւններ որոնք, գտնուելով եւ օգտակար ըլլալով հանդերձ հայ համայնքի նաեւ կարողացած են թափանցել ոչ հայկական ամերիկեան շրջանակներէ ներս, եւ ոչ միայն թափանցել, այլ կարեւոր դիրքեր գրաւել: Նման եզակի անձնաւորութիւններէն մէկն

է Տօքթ. Կարպիս Տէր Եղիայեան, Կլէնտէյլի մէջ հաստատուած եւ իր 14րդ տարին բոլորող Մաշտոց Գուլթի յարգարժան նախագահը: Սոյն յօդուածի սահմաններէն ներս կ'ուզենք անդրադառնալ այն համագումարին, որ կը ճանչցուի իբրեւ «Խաղաղութեան Համագումար» (Peace Conference), որուն 11րդ տարեկան ձեռնարկն էր «Rotary International» 5300 շրջանին, որ ոչ միայն կազմակերպողը եղած է սոյն ժողովներուն, տարիներու ընթացքին, այլ եղած է նախագահը համաշխարհային այդ մեծ բարեգործական միութեան: Այս միութիւնը, հիմնուած 1905 թուականին, արդէն իսկ թեւակոխած է իր մէկ դար գոյութիւնը, եւ լաւատեսութեամբ կը սկսի իր երկրորդ դարու գործունէութեան: Ուրեմն, Տօքթ. Կ. Տէր Եղիայեան կարեւոր անձնաւորութիւններէն մէկն է «Rotary» միջազգային կազմակերպութեան, եւ յատկապէս, սոյն համաժողովի պարագային, անոր կազմակերպողն ու նախագահը:

### »ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ« ՆՈՒԻՐՈՒԱԾ 11րդ ԺՈՂՈՎԸ

Սոյն ժողովը սեղի ունեցաւ Ապրիլ 8, 2006 թուականին, Շաբաթ օր, ամբողջ օրը, Փաստինայի «Ֆուլլըր» աստուածաբանական ճեմարանի «Travis» հանդիսարանէն ներս, ի ներկայութեան հոծ մասնակցողներու, Գալիֆորնիոյ տարբեր շրջաններէն: Հետաքրքրական էր ներկաներուն մէջ տեսնել երիտասարդներու կարեւոր թիւ մը, որոնք ուշադիր հետեւեցան «Մերձաւոր Արեւելք եւ Հիւսիսային Ափրիկէ»

աշխարհագրական շրջաններու նուիրուած ժողովին: Սոյն ժողովին, բացի «Rotary»էն, մասնակից էին նաեւ «Ֆուլլըր» ճեմարանը, եւ «UCLA» համալսարանի Միջին Արեւելեան ուսունասիրութեան կեդրոնը եւ «Anderson» գործավարական կեդրոնը: Հասկնալի կը դառնայ սոյն ժողովին բարձրորակ դիմագիծը ու բովանդակութիւնը:

### ՅԱՅՏԱԳԻՐԸ

Արձանագրութեան եւ նախաձաշի սպասարկութենէ ետք, կը սկսի օրուայ յայտագիրը: Իր բացման խօսքին մէջ, ժողովի նախագահ Տօքթ. Կարպիս Տէր Եղիայեան պատմական հակիրճ տեղեկութիւններ տուաւ «Rotary»ի անցնող 100-ամեակին, եւ իր կազմակերպած «Խաղաղութեան» նուիրուած ժողովներու մասին, որոնց 11րդն էր այս մէկը: Իրմէ ետք, բարի գալուստի խօսք մը ըրաւ Ֆուլլըր ճեմարանի պատասխանատուներէն՝ Տօքթ. Տրէվ Մքքոնըլը: Յայտագրի գործադիր նախագահ Պրն. Ռէյ Քարլսոնը յաջորդաբար բեմ հրաւիրեց Տօքթ. Ռոպըրթ Սփիշը՝ «UCLA»էն, Էվըլին Ռոյսէթը՝ Ֆուլլըր ճեմարանէն, Ճոնաթան Ֆրիտլէնալը՝ «UCLA»էն, Սառա Ֆիլիփսը՝ Նիճերիայէն, որոնցմէ իւրաքանչիւրը իրենց ելոյթին մէջ տուին պատկերը իրենց կատարած աշխատանքներուն Միջին Արեւելքի եւ Հիւսիսային Ափրիկէի մէջ:

Տրուած ըլլալով որ ժողովի ընդհանուր թեման խաղաղութիւնն էր, անոր հասնելու լաւագոյն միջոցները նկատուած էին. ա. Աշխատանք-Գործի ստեղծման պայմանները: Բ. Յոյսի ստեղծումը, գործի միջոցաւ: Գ. Յոյսով խաղաղութեան ստացումը: Բաւական բարդ եւ գործնական այս ծրագիրներու մասին էին եղած դասախօսութիւնները, որոնք ունկնդրուեցան մեծ հետաքրքրութեամբ: Կէսօրուայ ճաշի ընդմիջումէն ետք, ժողովի մասնակիցները բաժնուեցան 6-7 խումբերու, աշխարհագրական տարբեր շրջաններու յատուկ, եւ խորհրդակցական հանդիպումներու աւարտին, իւրաքանչիւր խումբի ներկայացուցիչը՝ գեկոյց կարգաց ժողովի մասնակիցներուն: Ներկաներուն մէջ կարելի էր նշմարել շուրջ 10 հայտորդներ որոնք «Rotary»ի պատկանելու եւ կամ հրաւիրեալ ըլլալուն համար կը մասնակցէին: Թեւաղբեր է որ նման ձեռնարկներ աւելի լայն հետաքրքրութեան արժանանան հայ համայնքի մտաւորական շրջաններու կողմէ, թէ իբրեւ մասնակցութիւն եւ թէ իբրեւ ամերիկեան միջավայրի ծանօթացում: Մինչ այդ, մեր շնորհաւորութիւնները Տօքթ. Կարպիս Տէր Եղիայեանին, իր մշտական ճիգերուն համար, ի նպաստ հայ-ամերիկեան գործակցութեան:

**Ձեր Ծանուցումները վստահեցէք «Մասիս» շաբաթաթերթին**



**WAHIB'S MIDDLE EAST RESTAURANT**  
"Where the East Meets the West"

**MEDITERRANEAN - LEBANESE FOOD**

**BANQUET HALL**

**CATERING FOR ALL OCCASIONS**

**FAMILY ENTERTAINMENT**

**EVERY FRIDAY & SATURDAY NIGHT INTERNATIONAL & ARABIC SHOW**



**NAZO, VARTAN, AMIR & SINGER MUHAMMAD**

**CALL FOR RESERVATIONS**  
**TEL 626-281-1006 626-587-1048**  
**FAX 626-281-3641**

**910 E. MAIN ALHAMBRA, CA**



**BELLY DANCING**

### ԿՐԿԻՆ 24 ԱՊՐԻԼ

#### Շարունակում էք 6-էն

Բէկ անունով գրուած եւ միւսը գերմանացի բժիշկ Տոկը. Քարլ Հանսի յուշատետրում յիշատակուած, այս դառը իրականութիւնն է բացայայտում որ երբ եւ որտեղ այսպէս կոչուած «քաղաքակիրթ» մարդկանց եւ կառավարութիւններէ շահերը պահանջեն՝ չքուած ն մարդկային յատկութիւնները եւ նրանք գիտակցօրէն փակուած են իրենց աչքերը բոլոր ստոր արարքների դիմաց ի շահ իրենց նպատակների իրականացման եւ նրանք իրենց նպատակներին հասնելու համար պատրաստ են դիմելու ամէն տեսակի ստոր միջոցներին) եւ ի՞նչ է սպասում անմեղ մարդկանց այլեւս կարելոր չի: Բայց այնուամենայնիւ հայերի պայքարն ու պահանջը ընդ-

դէմ 1915 թուի ցեղասպանութեան ոճրագործներին՝ մինչեւ վերջնական յաղթանակ՝ կը շարունակուի:

Վաստահ գիտեմ որ նրանց որդիներն ու ապագայ սերունդները ոչ միայն ազգային պահանջատիրութեան կը հասնեն՝ նիւթական վնասների հատուցմամբ, այլ նաեւ կը վերականգնեն իրենց տուժած բարոյական արժանիքները եւ մեր կորցրած երկու միլիոն մարդկութեան եւ նրանց մի ամբողջ դար չծնուած առնուակն չորս սերունդների տուգանքը ստանալով՝ յաղթանակի պանծալի դրօշը կը ծածանեն մեր ազատագրուած հողերի եւ գերեւարուած լեռան Արարատի Սուրբ գագաթին:

(1)Նախմբէկի յուշերը՝ Ստամպուլում տպագրուած թրքերէնով 1928ին:

### ԱՊՐԻԼԵԱՆ ԽՈՐԵՐ

#### Շարունակում էք 13-էն

րութեան ամենահեռուոր բնակավայրերը՝ Քէսապն ու Մուսա Լեռը պատերազմի գօտիներ էին արդեօք, որ նրանց բնակիչներին տարագրութիւն էին ազդարարել: Ոչ, ցեղ էին սպանում, որ չչուռթէին արեւմուտքի քաղաքակիրթութեան ընթացքները: Հիմա խօսում են մատենները երկրներին, մատենները հայոց, խորհրդարանները բազում ազգերի եւ թուրքը հատուցման ահից սարսափած, ուրանում է իր պատմութիւնը:

Ասում էին պատերազմ է, պիտի գինուորագրուէք հայրենիքի պաշտպանութեանը: Հայոց շէնքերի բազմահազար այրեր ու պարմաններ գինուոր եղան թուրքի բանակին: Ձինուոր, ոչ, ոչ մէկին գէնք տուեցին: Նրանց պոկեցին իրենց քաղաքներից ու շէնքերից որ մարէին հայու դիմադրական ուժը: Հայեր, ինչու ձեր գաւակներին թուրքի բանակ գորակոչեցիք, բարձրանալիք ձեր լեռներ, գնալիք նրանց դէմ կռուող Ռուսի բանակ: Իսկ Մուսա լեռան յաղթական մարտիկներ, վերապրող վրիժառու հայեր հայկական կամաւորական լէգէոն կազմեցին եւ խորտակեցին արարալի բարձունքների թուրքի պատնէշները, նրանց հազար, հազար գլխիկոր գերիները անցան հայոց խաչածեւած թրերի տակով, որոնցից պայթած արեւի ճառագայթները ծակում էին աչքերը նրանց:

Լուել էին թնդանօթները, խորտակուել էր, բզկտուել էր Օսմանի կայսրութիւնը: Մարդկայնութեան հանդէպ յանցագործութիւն կատարած ճիւղները հատուցման ահից

փախան: Հայ վրիժառու տղաներ, գացին բոլոր հետքերով, նրանց ճակատները իրենց պիղծ արիւնով շառագունելու: Եւ Պեռլինում, Հռովմում, Թիֆլիսում, իրենց իսկ իսթամպուլում գտան նրանց, գարկին նրանց հրապարակներում, փողոցներում ու խաւարեցին ընաց լոյսը: Երկնքում աստղիկներ դարձած նահատակների հոգիները իրենց թրթռուն ժպիտների լոյսերը ցօղեցին նրանց սրտերին:

Հայեր պահանջում են իրենց շէնքերը, որտեղ իրենց նախնիների աւիւնն էր յորդել: Պահանջում են նրանց, որոնք դեռ պիտի գային իրենց աշխարհ եւ ով իմանար դեռ քանի իմաստուններ կը գային Արմէնների հանձարի լոյսը փայլատակելու այս մոլորակին: Մեր պատմութիւնը դեռ անաւարտ է, մի նոր արշալոյսին արեւի ճառագայթները գրկած քարաւանները կը քայլեն դէպի իրենց նախնիների շէնքեր:

Եւ հայոց անկախացած խորհրդարանը, 1920 թուականի Ապրիլ ամսուայ երեքին, մտաւորական վրթանէս Փափագեանի առաջարկութեամբ Ապրիլ 24ը հռչակել էր Հայոց Ցեղասպանութեան յիշատակի սգոյ օր:

Եւ հիմա, հայոց նահատակների անմեռ հոգիների լոյսերը վառուում են հայոց մայր ոստանի բարձունքին, որին խոնարհուել են հայոց սիւնագարդ տասներկու աշխարհները, որտեղ նրանց ժպտում են հայոց դաշտերի, այգիների ծաղիկները: Իսկ նրա կողքին հայոց յաւերժութեան արեւը գրկած արծաթափայլ սիւնն է ճախրում դէպի աստղերը:

### ՏԱՌԱՊԱՆՔԻ ՈՒՂԻՈՎ

#### Շարունակում էք 7-էն

ուռք ունի իստուելու նրանց ընտանեկան ներքին գործերին, մանաւանդ, որ վախը սրտում է ապրում, որ մի օր իրեն կարող են սպանել որպէս հայ: Բայց ներքին մի նախագագցում շարունակ անհանգստացնում է նրան: Այսպէս անցնում են օրեր, շաբաթներ, ամիսներ ու տարիներ:

Քուրդը ամբողջ օրը բացակայում էր տնից՝ իր գործերով զբաղուած լինելով: Երբ տուն էր գալիս, կինը սիրալի դիմաւորում, օգնում, անմիջապէս սեղանը դասաւորում ու համով ճաշերով կերակրում նրան: Նրան թուում է, որ կինը փոխուել է և իր հանդէպ նրա վարուելակերպի մէջ տարօրինակութիւններ է նկատում, բայց այդ մասին չի խօսում: Որոշ ժամանակ անց նրան նորից թուում է, որ կինը աւելի սիրալի է դիմաւորում իրեն, բայց չի կարողանում հասկանալ պատճառը: Վերջապէս մի օր կասկածում է, որ Յակոբը կապուած է իր կնոջ հետ ու նրա մէջ արթնանում է խանդի գագցում, որը գնալով աւելի է խորանում և այդ օրուանից սկսած, գիշերները անընդհատ վիճում է կնոջ հետ, ծեծում նրան ու ստիպում է խոստովանել, որ Յակոբի հետ է լինում, բայց քանի որ այդպիսի բան չկայ, կինը հրաժարում է որեւէ բան ասել: Ընտանեկան այս վէճը անտանելի է դառնում: Կինն էլ չի դիմանում, բայց ուրիշ ելք չունենալով, ամէն անգամ համբերատար աշխատում է հասկացնել նրան, որ այդպիսի բան չկայ: Քանի որ կինը չի խոստովանում գոյութիւն չունեցող կապը, ամուսնու մօտ աւելի է խորանում խանդը և մի օր էլ կատաղութիւնից իրեն կորցրած յայտնում է, որ յաջորդ օրը ոչխարները արածացնելու ժամանակ Յակոբին պիտի սպանի: Գիշերը աղալի կինը, ամուսնուց գաղտնի, իր տղային ուղարկում է Յակոբի մօտ յայտնելու, որ ամուսինը նրան սպանելու է, թող տնից շուտ հեռանայ ու գնա հօրեղբօր տունը: Յակոբը քանի եկել էր այս տունը, չէր գնացել տղայի հօրեղբօր տունը և ճանապարհը չզիտեր: Տղան բացատրում է Յակոբին ինչպէս գնալ և վերջինս գիշերով փախչում ու իր վերջին շունչն առնում է այնտեղ: Այստեղ է պարզուած ողջ եղելութիւնը Յակոբի համար, որ գիշերների կռիւների պատճառը աղալի ու կնկայ միջև եղել է տիրոջ խանդը Յակոբի նկատմամբ, իսկ Յակոբը ոչ մի բանից տեղեկութիւն չունեցր:

Քանի որ աղան որոշել էր սպանել Յակոբին, գիշերը գնում ստուգում և տեսնում է, որ նա անկողնում չէ: Անմիջապէս տղային ուղարկում է եղբօր տունը ստուգելու, նա այնտեղ է, թէ ոչ: Տղան հասնելով հօրեղբօր տունը Յակոբին յայտնում է, որ շուտ հեռանայ այնտեղից ու գլուխն ազատի:

Գիշերով Յակոբը փախչում է անյայտ ուղղութեամբ, քանի որ ծանօթ չէր այդ տեղերին: Երկար վազելուց յետոյ բաւական հեռանում է գիւղից, բայց հոգնում է: Ճանապարհի եզերքին գլուխը մի քարի վրայ է դնում մի քիչ հանգստանալու, հոգնածութիւնից աչքերը փակում

են ու քնում է: Քնի մէջ ինչոր գանգերի ղողանջներ է լսում: Աչքերը բանալով տեսնում է ոչխարներ են անցնում կողքից: Վախիցը աւելի է կծկում տեղում, որ աննկատ մնալ մինչև ոչխարները հեռանան հովիւի հետ: Յետոյ նա վեր է կենում ու շարունակում իր ճամբան: Հասնում է մի գիւղ: Յոգնած ու սոված, էլ չի կարողանում շարունակել ճանապարհը: Մտնում է գիւղի պատահական մի տուն և հաց է խնդրում, միաժամանակ խնդրելով, որ եթէ աշխատողի կարիք ունեն, իրեն աշխատանք տան: Տեսելի ծանօթանալով նրա հետ և զգալով հայ լինելը, պայման են դնում, որ եթէ Ղուրանի վրայ երգուի և անունը փոխի, իրեն աշխատանք կը տան: Նա հրաժարում է այդ անելուց: Նրանք մի քիչ էլ խօսելով նրա հետ ու տեսնելով, որ խելօք տղայ է, նրան ընդունում ու յանձնարարում են հովուութիւն անել: Բաւական աշխատելուց յետոյ, նա վստահութիւն է ձեռք բերում:

Մի օր ջրաղաց են ուղարկում նրան ալիւր աղալու: Այնտեղ նա հանդիպում է հայերի, որոնք պատրաստում են գնալ իրենց երկիրը: Երբ հետաքրքրուած է, թէ ո՞րն է նրանց երկիրը, պարզում է, որ Բէյլանն է: Իրեն որոշ ճանաչողներ էլ են լինում այդ խօսակցութեան ընթացքում: Պայմանաւորում են միւս օրը հանդիպել կայարանում: Յաջորդ օրը, երբ Յակոբը գալիս է կայարան, շատ ծանօթներ է տեսնում այնտեղ, որոնց հետ վերադառնում է իր բնօրրանը՝ Բէյլան: Այդ Յակոբը Քեհրեբար Յակոբն էր:

\*\*\*

Աւարտելով ակնատեսի վկայի այս իրական պատմութիւնը, նկատենք, որ բոլոր թուրքերն ու քրդերը մարդասպաններ չէին: Նրանց մէջ, թէկուզ չնչին մի տոկոսը մարդկային խիղճը չի կորցրել և օգնել է հայերին իրենց այդ դժուար տարիներին: Թուրք մարդասպանների հետ նրանք միշտ պիտի յիշուեն Հայերի Ցեղասպանութեան պատմութեան մէջ որպէս վեհանաճ անձեր:


Այս պատմութիւնը չէր լինի, եթէ չլինէր 1915 թուականի Հայերի Ցեղասպանութիւնը և բազմահազար Յակոբներ իրենց կեանքը, ծնողներին ու հարազատներին չէին կորցնի, կապրէին խաղաղ իրենց բնօրրանում, բայց...: Որքա՞ն Յակոբներ ու Մարիամներ նահատակուեցին, որքան Յակոբներ ու Մարիամներ ու ծանցան՝ թուրքերի, քրդերի ու արաբների մէջ, որոնք, որքան կը բազմացնէին հայ բնակչութիւնը իր բնօրրանում ...:

Մեծ եղեւնի 91-րդ տարելիցի առթիւ խոնարհուած ենք նրանց յիշատակի առջև:

Յաւերժ հանգստութիւն նահատակների շիրիմներին, եթէ չիրիմ կոչենք Եփրատ գետը և ափերը, սիրիական անապատները, իրենց իսկ բնօրրանը, որտեղ ոչնչացուեցին նրանց զգալի մասը:

Բայց հայը գոյատևեց և նրա աննկուն կամքի ուժի շնորհիւ այսօր ունենք անկախ պետականութիւն:

Գալու է նաև այն սպասուած օրը, որ իրականան մեր երագները՝ սիրանանք մեր բնօրրանին ...:



**ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՀԱՅԿԱԶ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ «ԴԱՐՁԵԱԼ ՀՈՒՆՁԻ ԵՒ ՅՈՅՍ»**

**Ստանալու համար դիմել հետեւեալ գրախանութները Կլէմտէյի մէջ Ապրիլ՝ (818) 213-4112 Պերճի՝ (818) 244-3830**

**ՇՆՈՐԱԿՈՐԱՆՔ**

«Քաջ Նազար» երգիծաթերթի իմբագրութեան կազմի, նաև «Քաջ Նազար» ուղիղ եթեր հաղորդաշարի կողմից, Չերմապէս շնորհաւորեմ ենք թերթիս երկար տարիների աշխատակից, բանաստեղծ երգիծագիր՝ ՆԵՐՍԷՍ ԵՒ ՍՐԲՈՒՀԻ ԲԱԼԱՅԵԱՆՆԵՐԻ (Տէր Մեսրոպեան) ամուսնութեան 45 ամեակը, բազում բարեմաղթանքներով:

Այդ բարեբաստիկ առիթով «Քաջ Նազար»ը \$50 է նուիրում «Մասիս»ին:

### ԱՌՈՂՋԱՊԱՇԱԿԱՆ

#### ԴԵՌ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՅ ՄԵՏԻՔԵՐՈՎ ԴԵՂՈՐԱՅՔ ԳՆԵԼԻՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԶԵՂՁ ՍՏԱՆԱԼՈՒ ԾՐԱԳՐԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՎԱՍԱՐ

2006 թուականի Յունուարի 1-ից սկսել է գործադրուել մետիքերով դեղորայք ստանալու նոր ծրագիրը, եւ դեռ ժամանակ կայ այդ ծրագրից օգտուելիս լրացուցիչ ֆինանսական օգնութիւն ստանալու դիմելու համար:

Առ այսօր մետիքեր ունեցողներից շատերը արդէն որոշել են մետիքերի որ պլանից օգտուել: Ուրիշներ կարող են դեռեւս ընտրութիւն կատարել: Բայց եթէ դուք ունե՛ք սահմանափակ եկամուտ եւ ունեցուածք, մի մոռացէ՛ք պարզելու՝ կարո՞ղ էք արդեօք լրացուցիչ գեղչերից օգտուել: Այդ գեղչերը վերաբերում են ամսական վճարումներին, տարեկան, պահումների չափին (deductible) եւ դեղորայք գնելիս ձեզ բաժին ընկնող վճարումներին:

Եթէ նոյնիսկ արդէն ընտրել էք դեղորայքի պլանը, կարող էք դարձեալ դիմել լրացուցիչ օգնութեան ստանալու համար:

Միջին հաշուով այդ լրացուցիչ օգնութիւնը կարող է հասնել տարեկան մինչեւ \$2100 (ամն. տոլլար):

Սոցիալական Ապահովութեան գրասենեակները շարունակում են դիմումներ վերցնել: Մետիքեր ունեցողներից տեսնելու թէ կարող են արդեօք նրանք լրացուցիչ օգնութիւն ստանալ: Որակաւորուելու համար (to qualify) անձը պէտք է ունենայ տարեկան \$14,700-ից ցածր եկամուտ եւ \$10,000-ից ցածր ունեցուածք: Ամուսնական զոյգի համար այդ սահմանները քիչ անելի բարձր են - 19,800 տարեկան եկամուտ եւ \$20,000 ունեցուածք:

Ունեցուածքի սահմանը կարող է թեթեւակի բարձր լինել - մօտ \$1500 անձի համար, եթէ այդ ունեցուածքի մի մասը յատկացուելու է թաղման ծախսերին:


Կարելու է, որ բոլոր մետիքեր ունեցողները հասկանան, որ եթէ նոյնիսկ իրենք որակաւորում են լրացուցիչ օգնութիւն ստանալու, իրենք կարիք ունեն անդամագրուելու մետիքերի կողմից ընդունուած որեւէ պլանի:

Ուրեմն յիշէ՛ք՝ դեռ ուշ չէ տեսնելու, թէ կարո՞ղ էք, որակաւորուել լրացուցիչ օգնութիւն ստանալ դեղորայքի արժեքների վերաբերեալ: Զորս միլիոնից անել անձինք արդէն դիմել են: Եթէ կարծում էք, թէ կարող էք որակաւորուել լրացուցիչ օգնութեան համար, ապա կարող էք դիմում լրացնել համակարգիչով դիմելով [www.socialsecurity.gov](http://www.socialsecurity.gov):

Կամ կարող էք կապուել Սոցիալ Ապահովութեան գրասենեակի հետ, հեռաձայնով 1-800-772-1213 (TTY 1-800-325-0778) եւ խնդրել, որ ձեզ դիմումագիր ուղարկեն:

Ժամանակը սահում է, այնպէս որ արե՛ք դա այսօր, որ մինչեւ 2006 թուի Մայիս 15-ը կարողանաք մասնակցելու մետիքերի դեղորայքից օգտուելու նոր ծրագրին:

By Mariana Gitomer



### ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

#### ՖԻԼՈՍԷՆ ԱՐԸՃԵԱՆԻ ՄԱՐՈՒԱՆ ՏԽՈՒՐ ԱՌԻԹՈՎ

Հանգուցեալի ընտանիքն ու հարազատները իրենց խորին շնորհակալութիւնները կը յայտնեն Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեանին, Շնորք Քհնյ. Տէմիրճեանին, ազգականներուն, հարազատներուն, ընկերներուն եւ բոլոր անոնց, որոնք անձամբ, գրութեամբ, հեռաձայնով, ծաղկեպսակով եւ կամ նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց սուգին: Այս տխուր առիթով փոխան ծաղկեպսակի Հալէպի Կիլիկեան Բարեգործական Միութեան, վարժարանի ֆոնտին կատարուած են հետեւեալ նուիրատուութիւնները, որոնց համար վարժարանի Տնօրէնութիւնը շնորհակալութիւն կը յայտնէ:

Տէր եւ Տիկ. Աղամ եւ Ռիթա Գալլանեան	\$500
Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Վանիա Արճեան	\$300
Տէր եւ Տիկ. Հրաչ եւ Մարալ Արաճեան	\$200
Տէր եւ Տիկ. Օննիկ եւ Սօսի Համալեան	\$200
Տէր եւ Տիկ. Գառնիկ եւ Սիրվա Միքայէլեան	\$200
Տէր եւ Տիկ. Կեթաս եւ Արաքսի Եթէնէքեան	\$200
Տիար Յարութ Տէր Ղազարեան	\$150
Ապոս, Ժան եւ Սոնա	\$100
Անահիտ Էջնկիւնճըն	\$100
Հանտ, Ռիմ եւ Սեդա	\$100
Տէր եւ Տիկ. Պաշիւր եւ Վերա ՏէրԳասպար	\$100
Տէր եւ Տիկ. Վահէ եւ Ռոզէթ Էթմէքճեան	\$100
Տէր եւ Տիկ. Յովիկ եւ Զեփիւռ Միքայէլեան	\$100
Տէր եւ Տիկ. Գըրք եւ Վերա Գալպաքլեան	\$100
Տիար Սարգիս Արտճեան	\$100
Լուսին Գարամանուկեան	\$100
Արպերա եւ Սիրուֆի Միքայէլեան եւ ընտանիք	\$100
Տէր եւ Տիկ. Արմէն եւ Անի Աքեան	\$100
Խարատճեան Ընտանիք	\$100
Տէր եւ Տիկ. Լեւոն եւ Սիրվա Կիրակոսեան	\$100
Տէր եւ Տիկ. Յովսէփ եւ Սոնիա Գաբրիէլեան	\$100
Տէր եւ Տիկ. Հրաչ եւ Արփի Գասապեան	\$100
Տիար Վիգէն Կարապետեան	\$100
Տէր եւ Տիկ. Վարանդ եւ Սօսի Զինչինեան	\$100
Տէր եւ Տիկ. Սեւան եւ Զեփիւռ Եաքինեան	\$100
Տէր եւ Տիկ. Միշէլ եւ Վիքթորիա Քամփոս	\$100
Սանտրա եւ Ժայէ, Քէրըն Ռոպինսոն	\$100
Օհանեան ընտանիք	\$ 75
Սիրարփի Ասարեան	\$ 70
Սօսի եւ Զարուհի Արոյեան	\$ 50
Տէր եւ Տիկ. Մարտիկ եւ Էօթէնի Արոյեան	\$ 50
Տէր եւ Տիկ. Յովսէփ եւ Անահիտ Աթէշեան	\$ 50
Տէր եւ Տիկ. Օհաննէս եւ Սօսի Հաննէսեան	\$ 50
Նազարէթ եւ Ռաֆֆի Գեւորեան	\$ 50
Տէր եւ Տիկ. Նշան եւ Շաքէ Օհանեան	\$ 50
Տէր եւ Տիկ. Կարօ եւ Սեդա Մանուէլեան	\$ 50
Տէր եւ Տիկ. Յովիկ եւ Անի Մահերէճեան	\$ 50
Տօքթ. Մայքըլ Արսլանեան	\$ 50
Տէր եւ Տիկ. Վարդան եւ Ֆրմի Զէրունեան	\$ 50
Նազեղի Տէր Վարդանեան	\$ 50
Տէր եւ Տիկ. Ճէրալտ եւ Հէրիէթ Ուրիք	\$ 50
Տէր եւ Տիկ. Ճըրմըն եւ Մարիալ Կոնզալէս	\$ 50
Մի ոմն	\$ 50
Տէր եւ Տիկ. Հրաչ եւ Մարօ Տէր Ղազարեան	\$ 40
Ասողիկ Կէօզիւպէիւքեան	\$ 40
Տէր եւ Տիկ. Զաւէն եւ Ռոզին Աթաշեան	\$ 40
Լիւսի Թոփրաքճեան	\$ 25

### ՅԱԲԱԿՑԱԿԱՆ

ՖԻԼՄԷՆ ԱՐԸՃԵԱՆԻ մահուան տխուր առիթով՝ Կիլիկեան Բարեսիրական Միութեան վարչութիւնն ու անդամները իրենց խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն եւ համայն հարազատներուն:

Վարչութիւնը նմանապէս շնորհակալութիւն կը յայտնէ փոխան ծաղկեպսակի կատարուած բոլոր նուիրատուութիւններուն:

## ՔԱՋ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան  
ժամը 11:00-ից 1:00  
Կլէմտէյլի 26-րդ կայանից

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION



Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:  
Proud Past, Exciting Future.



# ՇՐԸՄ-Ի 100 ԱՄԵԱԿԻ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

## ՅՈՒՇԱՐՍՆ

ԱՊՐԻԼ 23

Կիրակի, 23 Ապրիլ 2006-ին, Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Յովնան Արք. Տէրտրեան պիտի պատարագէ եւ հոգեհանգստեան մասնաւոր պաշտօն պիտի կատարէ Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ: Նման հոգեհանգստեան արարողութիւններ պիտի կատարուին տարբեր յարանուանութիւններու պատկանող Հայկական եկեղեցիներու մէջ:

## ՇՈՔԵՐԱՆՔԻՍ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ, ՈՐՈՒՆ ՊԻՏԻ ՅԱԶՈՐԴԷ

## ԽԱՉՔԱՐ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ՕԾՈՒՄ ԵՒ ԱՂՕԹՔ

Կէսօրէ ետք ժամը 1:30-ին, Փասատինայի Հ.Բ.Ը. Միութեան Կեդրոնին մէջ Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Յովնան Արք. Տէրտրեան, բացումը պիտի կատարէ եւ օժէ խաչքար մը նուիրուած ՀԲԸՄ-ի նուիրեալ եւ հաւատաւոր անդամներու յիշատակին: Իրեն պիտի միանան Հայ Կաթողիկէ եւ Աւետարանական համայնքներու հոգեւոր պետերը:

## ՏՈՒՍԱՍՆՈՒԹԻՒՆ

ՄԱՅԻՍ 7

Կազմակերպութեամբ՝ Հ.Բ.Ը. Միութեան Հարաւային Գալիֆորնիոյ Շրջանակային Յանձնաժողովին եւ հովանաւորութեամբ՝ Արեւմտեան Թեմի Առաջնորդ Յովնան Արք. Տէրտրեանի, Հ.Բ.Ը. Միութեան 100 ամեակը նշող բացառիկ հանդիսութիւն մը տեղի պիտի ունենայ Մայիս 7, 2006-ին, ժամը 5:00-ին Փասատինայի Ալէք Մանուկեան Կեդրոնին մէջ:

## ԳԼԽԱԴՈՐ ԲԱՆԱԽՕՍՆԵՐ՝ ԿԱՌԱՎԱՐԻՉ՝ ՃՈՐՃ ՏԵՕՔՄԷՃԵԱՆ, ԱՍԱՏՈՒՐ ԿԻԻՉԵԼԵԱՆ

## ԱՐՈՒԵՍԱԳԵՏՆԵՐ՝ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏԵԼԵԱՆ, ԼՈՐՆԱ ԿՐԻՏԻԹ

ՄԱՍԱԿՑՈՒԹԵԱՍԲ՝ ԿԼԵՆՏԵՆԻ ՇԱՄԱՉԳԱՅԻՆԻ ԳՈՒՄԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ, ՇՐԸՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ-ՏԵՄԻՐՃԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ, ՈՒՌԲԵՆ ԹԵԼՈՒՆՑ, ԱՆԱՇԻՏ ՆԵՐՄԵՏԵԱՆ

Միտով հրատարակուած էք բոլորը: Հիւրասիրութիւն հանդիսութեանն ետք: Պատասխանեցէք մինչեւ Ապրիլ 15, 2006, հեռաձայնելով ՀԲԸՄ-ի գրասենեակը՝ (626) 794-7942 կամ գրել՝ info@agbuca.org

## ԿԱԼԱ-ՃԱՇԿԵՐՈՅԹ

ՅՈՒՆԻՍ 17

Հ.Բ.Ը. Միութեան Հարաւային Գալիֆորնիոյ Շրջանակային Յանձնաժողովը կը յայտարարէ հարիւրամեակի Կալա-Ճաշկերոյք, տօնելու համար Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան պանծալի տարեդարձը:

## ՇՐԸՄ ԸԱՐԻՒՐԱՄԵԱԿԻ ԿԱԼԱ-ՃԱՇԿԵՐՈՅԹ

ՆԱԽԱԳԱՐՈՒԹԵԱՍԲ՝ ՈՒՉԸՐՏ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

Universal Hilton Hotel Պանդոկին մէջ: Յաւելեալ տեղեկութեանց համար հեռաձայնել ՀԲԸՄ-ի գրասենեակը՝ (626) 794-7942, ext. 11 կամ գրել՝ annette@agbuca.org